

7-85

ՀՀ ՊՆ Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՆԻԿ ԿԱՐԵՆԻ

ԱՂԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԴԵՐԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ 1990-2004ԹԹ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ
(ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

ԻԳ. 00.02. - «Քաղաքական ինստիտուտներ և
գործընթացներ» մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների թեկնա-
ծուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2011

Ատենախոսության բեման հաստատվել է Ռուս-Հայկական /Սլավոնական/
համալսարանում

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների
դոկտոր Գ. Ս. Քեռյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների
դոկտոր Լ. Ղ. Շիրինյան

քաղաքական գիտությունների
թեկնածու Գ. Ս. Սիմոնյան


Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Պետական Համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2011թ. հունիսի 7-ին,
ժամը 15:00-ին, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ում գործող ՀՀ ԲՌՀ-ի 056 մասնագիտական
խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ 0037 Երևան, Ուլնեցու փողոց 56/6:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011թ. մայիսի 6-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
Պատմական գիտությունների դոկտոր՝

 Գ. Ա. Չոբանյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության բեմայի արդիականությունն ու հրատապությունը. ԱՊՀ ողջ տարածքում, այդ թվում նաև Հարավային Կովկասում վերջին շրջանում տեղի են ունենում լուրջ աշխարհաքաղաքական զարգացումներ: Ի թիվս տարածաշրջանում ավանդաբար մեծ դերակատարություն ունեցող պետությունների, ինչպիսիք են Ռուսաստանը, Իրանը և Թուրքիան, Հարավային Կովկասի նկատմամբ լուրջ հետաքրքրություն են ցուցաբերում նաև ԱՄՆ-ը, Եվրամիությունը, Չինաստանը: Հարավային Կովկասը փաստորեն հայտնվել է խոշոր աշխարհաքաղաքական ուժերի ուշադրության կենտրոնում: Այստեղ տեղի են ունենում բազմաթիվ ինտեգրացիոն գործընթացներ, տարածաշրջանի երեք հանրապետությունները ներգրավվում են տարբեր միջազգային կազմակերպությունների և ծրագրերի շրջանակներում, վերափոխաստավորում են իրենց արտաքին քաղաքականության առաջնությունները՝ հաշվի առնելով նոր աշխարհաքաղաքական զարգացումները տարածաշրջանում և ամբողջ աշխարհում:

Տարածաշրջանային էական փոփոխությունների տեղիք տվեց նաև 2003թ. նոյեմբերին Հայաստանի հարևան մյուս պետության՝ Վրաստանի այսպես կոչված «վարդերի հեղափոխության» արդյունքում տեղի ունեցած իշխանափոխությունը: Նախագահ Շևարդնաձեին փոխարինելու եկավ նոր քաղաքական աշխարհայացք ունեցող, երիտասարդ և եռանդուն քաղաքական գործիչ Սիխայիլ Սահակաշվիլին, ինչը մեծ անդրադարձ ունեցավ ողջ տարածաշրջանի վրա:

Նման հանգամանքներում Ադրբեջանի արտաքին քաղաքականության առաջնությունների ուսումնասիրությունը ձեռք է բերում մեծ հնչեղություն և արդիականություն: Անպայման պետք է գնահատել նման ուսումնասիրության արդիականությունը, քանի որ, հայ-ադրբեջանական հարաբերություններում ամկա հիմնախնդիրները պահանջում են համակարգային վերլուծության ենթարկել Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը և նրա հիմնական ուղղությունները Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացի և դրա զարգացումների համատեքստում:

Հարավկովկասյան տարածաշրջանի միջազգային քաղաքական գործընթացներում Ադրբեջանի դերի ու նշանակության հետազոտությունը առաջնային է Հայաստանի բոլոր քաղաքական գիտությունների համար: Ղարաբաղյան պատերազմում հաղթելով ռազմի դաշտում, Հայաստանը կարիք ունի ամրապնդել այդ հաղթանակը դիվանագիտական և քաղաքական դաշտում: Այս հաղթանակի համար արդեն կարևոր է ամբողջական և իրական պատկերացում ունենալ Ադրբեջանի միջազգային քաղաքական կշռի ու դերակատարման, ինչպես նաև մեծ տերությունների ու համաշխարհային ուժային կենտրոնների համար նրա նշանակության մասին: Ադրբեջանի միջազգային քաղաքական կշռի մասին պատկերացումները պետք է հենվեն ոչ թե զգացմունքների և կույր ատելության, այլ իրականության ճիշտ ընկալման և գիտականության վրա: Մեր կյանքի օրվա փոփոխության փոխարեն որդեգրելով սառը դատողության և իրական

հաշվարկների սկզբունքը հնարավոր կլինի բացահայտել հակառակորդ կողմի կարողությունները, որոնք ցավոք սրտի մինչ օրս ճիշտ չեն գնահատվում հայ քաղաքագիտական մտքի կողմից:

Հետազոտության բեմայի հրատապությունը թելադրված է ներքոհիշյալ հանգամանքներով.

- 2003թ.-ին իշխանության եկած Իլիամ Ալիևի կառավարության ազդեցիկ հայտարարությունները և պատերազմի վերսկսման հնարավորությունը:
- Ադրբեջանի արտաքին քաղաքականության մտքի կողմից:
- Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում:
- Ադրբեջանի արտաքին քաղաքական վտանգավոր ձեռնարկումները միջազգային կազմակերպություններում:
- Նոր շեշտադրումները Ադրբեջանի տարածաշրջանային քաղաքականության մեջ:
- Ադրբեջանի տնտեսական կշռի բարձրացման հնարավոր հետևանքները:
- Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման սկսված գործընթացում Ադրբեջանի բացասական դերակատարման բացահայտումը:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը. 1990-2004թթ. Հարավ-կովկասյան տարածաշրջանի միջազգային քաղաքական գործընթացներում ադրբեջանական գործոնի քաղաքագիտական վերլուծությանը նվիրված գիտական աշխատությունները Հայաստանում սակավ են: Սակայն մեծ թիվ են կազմում արտասահմանում, հատկապես Ռուսաստանում, Ադրբեջանում և արևմտյան գիտական, հասարակական քաղաքական պարբերականներում հրատարակված աշխատությունները, որոնց մեծ մասը կրում է կողմնակալ բնույթ: Սրանց մեջ ադրբեջանական գործոնը լուսաբանված է Ռուսաստանի, Ադրբեջանի կամ արևմտյան տերությունների շահերի տեսանկյունից և հաճախ արհեստականորեն ուռճացված է Ադրբեջանի դերակատարումը միջազգային գործընթացներում: Այնուամենայնիվ առկա են մի շարք հիմնարար, ընդհանրացնող աշխարհաքաղաքական ընդարձակ հետազոտություններ, որոնք օբյեկտիվորեն և գիտական հիմնավորվածությամբ ներկայացնում են հարավկովկասյան աշխարհաքաղաքական իրադրությունը: Դրանցից են Կ.Ս.Հաջիևի¹, Ն.Ա.Նարտովի², Էդմոնդ Հերզայգի³, Մոհիադդին Սեշբայի⁴, Ռ.Ֆելտխեմի⁵ աշխատությունները:

Ուշադրության է արժանի Մոսկվայում Ե.Մ.Կոժոկինի խմբագրությամբ հրատարակված գիտական աշխատությունների ժողովածուն, որում առկա

¹ Гаджиев К. С., Геополитика Кавказа, М., 2001.

² Нартов Н.А. Геополитика. М., 2004.

³ Edmund Herzig, The New Caucasus: Armenia, Azerbaijan and Georgia. The Royal Institute of International Affairs. London, 1999.

⁴ Mohiaddin Mesbahi, Central Asia and the Caucasus after the Soviet Union (Domestic and international Dynamics). University Press of Florida, USA, 1994.

⁵ Фельтхем Р.Дж. Настольная книга дипломата. Минск, 2000.

հոդվածները բավականին արժեքավոր տեղեկություններ են պարունակում Ադրբեջանի արտաքին քաղաքականության գերակայությունների մասին⁶:

Եթե արտասահմանյան հեղինակների մեծ մասն իրենց հետազոտություններն իրականացրել են օտարամետ դիրքերից, ապա հայ հետազոտողների աշխատություններն առավել հայաստանամետ են և օբյեկտիվ⁷: Առանձնահատուկ պետք է նշել հատկապես Հայկ Քոթանջյանի, Ալեքսանդր Մանասյանի, Լևոն Շիրինյանի, Հայկ Դեմոյանի, Վահրամ Տեր-Մաթևոսյանի, Ռուբեն Սաֆրաստյանի, Հակոբ Չաքրյանի, Արմեն Այվազյանի, Գրիգոր Արշակյանի, Ալեքսանդր Իսկանդարյանի, Սերգեյ Սինասյանի պատմա-քաղաքական հետազոտությունները, որոնցում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և Հայաստանի ռազմավարական անվտանգության համատեքստում գիտականորեն հետազոտված են տարածաշրջանային համատեքստում գիտականորեն հետազոտված են տարածաշրջանային աշխարհաքաղաքական մոր իրողությունները, որոնք լույս են սփռում նաև Ադրբեջանի և նրան օժանդակող պետությունների քաղաքականության վրա⁸:

⁶ Независимый Азербайджан. Под. ред. Е.М.Кожокина. том 2. М., 2000.

⁷ Steu Vicken Cheteryan, Dialectics of Ethnic Conflicts and Oil Projects in the Caucasus. (The Triangular Dilemma of Azerbaijan) PSIS, 1997; Мурадян И. Геоэкономические проблемы Кавказско-Каспийского региона, Е., 1999; Саркисян М., Политические проблемы Кавказа и Армения, Е., 1998; Չարգարյան Մ., Մետաքսի ճանապարհը՝ տարածաշրջանի պատմամշակութային անցյալի և քաղաքական ներկայի համատեքստերում, ՌԱՀԿ, Եր., 1999; Григорян А., Армяно-азербайджанские отношения: реалии и перспективы, АЦСНИИ, Е., 2001; Հարությունյան Ա.Ա. Կարս - Ախալքալաք երկաթուղու շինարարության ծրագիրը և տարածաշրջանային հնարավոր զարգացումները, ՌԱՀԿ, Ե., 2007; Сергей Минасян, Особенности Карабахской стратегии Азербайджана: политика периферийных действий, нефтяные ресурсы и гонка вооружений // 21-й век, N 2, 2008, Нораваик և այլն:

⁸ Տե՛ս Քոթանջյան Հ. Ս., Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Եր., 2008; Քոթանջյան Հ. Ս., Ռազմավարական ուղեցույցներ Հայաստանի պատմության ներգափոխման դեմ գիտական պայքարում ցանցայե տեսանկյունից // Աշխատանքային տետրեր: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ԱՌՀԻ, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, 4(16), 2010, էջ 5-33; Քոթանջյան Հ. Ս., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր.; ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ԱՌՀԻ, 2010; Քոթանջյան Հ. Ս., Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան. - Եր.; ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ԱՌՀԻ, 2009; Манасян А., Карабахский конфликт. Ключевые понятия и хроника. Ереван, 2005; Մանասյան Ալեքսանդր, Լեռնային Ղարաբաղ, ինչպես է դա եղել... /Եր.: ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն», ՊՌԱԿ, 2010թ. Շիրինյան Լևոն Դ., Թուրքիա-Հայաստան. ռազմավարական զիզգագներ, Եր., 2006; Դեմոյան Հ., Ղարաբաղյան պատերազմը և թուրքական գործոնը, Երևան, 2002; Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական քաղաքական կյանքում (1970-2001թթ.), Երևան, Լիմուշ, 2008; Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21-րդ դարում պատմեղներ ստեղծել հարևանների միջև, Երևան, Ջանգալ-97, 2003; Չաքրյան Հ., Իսլամական գործոնը Արևմուտք-Թուրքիա փոխհարաբերությունների ենթատեքստում //Հայացք Երևանից, N3/1, 1997, էջ 15-20; Այվազյան Ա.Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը, Ե., 1998; Այվազյան Ա. Ղարաբաղյան հակամարտության

Հատկապես արժևորում ենք Հ. Քոթանջյանի ներդրումը ՀՀ և ԼՂՀ շուրջ ձևավորված անվտանգային միջավայրում տեղի ունեցող քաղաքական գործընթացների հետ կապված ռազմավարական զարգացումների հետազոտությունները, որոնք անմիջականորեն առնչվում են մեր թեմայի ուսումնասիրության հետ:

Հիմնախնդրի գիտական մշակվածության մասին խոսելիս հարկ ենք համարում արժևորել նաև վերլուծական աշխատանքները⁹, որոնցից առաջին հերթին կուզենայի ներկայացնել հայ և ադրբեջանցի գիտնականներ և հրապարակախոսներ Հարություն Խաչատրյանի և Ալի Աբասովի հեղինակած «Карабахский конфликт. Варианты решения; идеи и реальность» աշխատությունը¹⁰: Այս աշխատությունն իրենից ներկայացնում է հայ և ադրբեջանցի հեղինակների միասնական աշխատանքի եզակի նախադեպ և հենց դրանում է կայանում նրա կարևորությունը, քանի որ միևնույն գրքի էջերում կարելի է ծանոթանալ երկու կողմերի տեսակետներին, փաստարկներին և հիմնավորումներին, ինչպես նաև ծանոթանալ երրորդ կողմի կադրային դիվանագետ և ԵԱՀԿ Մինսկի խմբի Ռուսաստանի կողմից համաձայնագրի վաղիմիոր կազմիտրված մեկնաբանություններին:

Գիրքը, ինչպես վկայում է նրա անվանումը, նվիրված է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: Այստեղ ներկայացվում են հակամարտության կարգավորման նպատակով տարբեր միջնորդ առաքելությունների գործունեությունը, հիմնախնդրի կարգավորման տարբեր մոդելները, և դրանց առանձնահատկությունները, վերլուծվում է դարաբաղյան հիմնախնդրի հետ դրանց համատեղելիության աստիճանը, դրական և բացասական կողմերը:

Գրքում նաև զուգահեռներ են անցկացվում Հայաստանի և Ադրբեջանի վարած արտաքին քաղաքականության և այդ երկրներում տիրող բարոյաժողովրդական մթնոլորտի, ներքաղաքական կացության, հայ և ադրբեջանական հասարակությունների սպասումների ամփոփման միջև, փորձ է արվում բացահայտել արտաքին քաղաքականության վրա այդ գործոնների ազդեցության աստիճանը:

Ադրբեջանի արտաքին քաղաքականության վրա ազդող տարբեր ներքին և արտաքին գործոնների, մասնավորապես տնտեսական գործոնի և այդ համատեքստում էլ էներգակիրների ազդեցությունը պարզաբանելու գործում

կարգավորման խնդիրները և Հայաստանի աշխարհառազմավարական դրությունը, // Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը: Վերլուծական և փաստագրական նյութերի ընտրանի, Ե., 2006, էջ 133-160; Արշակյան Գ. Ս., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային կովկասում 1991-2001թթ.: - Եր.: «Գիտություն» հրատ., 2009; Искандарян А., Минасян С., Прагматичность политики сквозь реалии исторических ограничений: анализируя армяно-турецкий процесс. аналитические доклады Института Кавказа, но.1, январь 2010, - Ер.: Институт Кавказа, 2010:

⁹ Հետազոտության ընթացքում միակողմանիությունից խուսափելու և անհրաժեշտ փաստական նյութ քաղելու համար օգտագործված են մեծ թվով ադրբեջանցի քաղաքագետների վերլուծական հոդվածներ "Центральная Азия и Кавказ" և այլ գիտական ու քաղաքական պարբերականներին:

¹⁰ Հրատարակվել է Մոսկվայում 2004թ.

կարևոր նշանակություն ունեցան Ե. Կոժոկիմի խմբ. «Независимый Азербайджан. Новые ориентиры», Վ. Հուսեյնովի «Каспийская нефть, экономика и геополитика», Ս. Չեռնյակսկու «Новый путь Азербайджана» աշխատությունները, որտեղ ներկայացվում է 1991 թվականին անկախության ձեռքբերումից ի վեր Ադրբեջանի անցած ճանապարհը, ուսումնասիրման են ենթարկվում Ադրբեջանի առաջնայնությունները ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում և այն ընդհանուր ուղղությունը, որով շարժվում է երկիրը: Ադրբեջանի ներկայիս դեկլարության օրոք երկրի արտաքին քաղաքականության մեջ նոր շեշտադրումները նկատելու և հասկանալու գործում այդ գրքերը ունեցան կարևոր նշանակություն:

Ատենախոսության համար ընթացիկ տեղեկատվության հիմնական աղբյուր են ծառայել Ադրբեջանի առավել հեղինակավոր «Зеркало», «Эхо», «Ени Мусават», «525» թերթերը, ինչպես նաև «Азербайджанское государственное телеграфное агентство», «Туран» լրատվական գործակալությունները, ռուսական «Независимая газета» թերթը, «Регнум» գործակալությունը, «Radio Free Europe»-ի կայքը:

Պետք է նշել, որ գրականության ցանկում ընդարձակ տեղ են զբաղեցնում ադրբեջանական պարբերականները, կայքերը և աշխատությունները, որոնց մեծ մասը տառապում է կողմնակալությամբ, հատկապես Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի վերաբերյալ նյութեր հրապարակելիս: Հաճախ ադրբեջանական թերթերում տպագրվում էր ուղղակի կեղծ տեղեկատվություն: Այդ իսկ պատճառով Ադրբեջանից եկող տեղեկատվությունը ստուգելու համար օգտագործվել են հայկական, ռուսական, արևմտյան լրատվամիջոցների նյութերը: Պաշտոնական տեղեկատվության հիմնական աղբյուր են ծառայել նաև ՀՀ և ՌԴ ԱԳՆ-երի, Ադրբեջանի մախազահի պաշտոնական կայքերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը Ադրբեջանի միջազգային-քաղաքական կշռի և դերակատարման քաղաքագիտական վերլուծությունն է և ադրբեջանական գործոնի հետազոտությունը 1990-2004թթ. Հարավկովկասյան տարածաշրջանի միջազգային քաղաքական գործընթացներում:

Հետազոտությունը լիարժեք դարձնելու և նրա կիրառական նշանակությունը ապահովելու համար մենք մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- հետազոտել Ադրբեջանի դերը տարածաշրջանի տնտեսական – տրանսպորտային ինտեգրացիոն գործընթացներում.
- բացահայտել Ադրբեջանի արտաքին քաղաքականության գերակայությունների տնտեսական հիմքերը.
- ուսումնասիրել կրոնական և էթնիկական ընդհանրության լծակների օգտագործումը Ադրբեջանի կողմից Իրանի Իսլամական Հանրապետության և Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում.
- հստակեցնել ադրբեջանական գործոնը Ռուսաստանի հարավկովկասյան քաղաքականության և ԱՊՀ միջպետական հարաբերություններում.
- վերլուծել դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացների քողի տակ միջազգային կազմակերպություններում

Աղբբեջանի արտաքին քաղաքական նախաձեռնությունների էությունը:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան ԽՍՀՄ փլուզումից հետո, հետասառըպատերազմյան աշխարհաքաղաքական նոր իրադրությունում Աղբբեջանի անկախ հանրապետության միջազգային-քաղաքական դերակատարումն է հարավկովկասյան տարածաշրջանային գործընթացներում: Հետազոտության առարկան ենթարկվել է քաղաքագիտական վերլուծության, պատմական և միջազգայնագիտական որոշ ասպեկտների համադրությամբ: Հաշվի առնելով դարաբաղյան հակամարտության կարևորությունը, այն ևս ընդգրկված է հետազոտության առարկայի մեջ:

Հետազոտության ժամանակագրական շրջանակները: Ատենախոսությունն ընդգրկում է 1990-2004թթ.: Այսինքն վերցված են 90-ական թվականները, հիմնականում Հեյդար Ալիևի կառավարման տարիները, որոնց բնորոշ է եղել որոշակի դիմադրական և կայունությունը արտաքին քաղաքական գերակայություններում: Միաժամանակ զգալի տեղ է հատկացված 2003-2004թթ.-ին, երբ Իլիամ Ալիևը անցնելով իշխանության գլուխ նոր շեշտադրումներ արեց Աղբբեջանի արտաքին քաղաքականության մեջ, ուժեղացնելով ազդեցիկ ռիտորիկան:

Ատենախոսության գիտական արդյունքներն ու գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ այն հանդիսանում է 1990-2004թթ. հարավկովկասյան տարածաշրջանի միջազգային-քաղաքական գործընթացներում աղբբեջանական գործոնի դերի լուսաբանմանը նվիրված քաղաքագիտական առաջին համալիր հետազոտությունը Հայաստանում: Չնայած որ, հրապարակի վրա առկա են տարածաշրջանային գործընթացներին վերաբերվող բազմաթիվ աշխատություններ, այնուամենայնիվ սա առաջին հետազոտությունն է, որն ընդգրկում է Աղբբեջանի միջազգային-քաղաքական կշռի վերլուծությունը բոլոր ասպեկտներով:

Այս գիտական հետազոտության նորույթը սերտորեն կապված է հեղինակի մոտեցումների և դիրքորոշումների հետ: Եթե նկատի ունենանք, որ հրապարակված աշխատություններից մեծ մասը կրում են կանխակալ հակահայկական կամ հակաաղբբեջանական դիրքորոշումների ազդեցությունը, ապա հիշյալ ատենախոսությունը նորություն է այն իմաստով, որ նրանում աղբբեջանական գործոնի դերը քաղաքագիտական վերլուծության է ենթարկվել չեզոք, օբյեկտիվ և անկողմնակալ դիրքերից:

Ատենախոսության գիտական արդյունքների և գիտական նորույթի մեջ կարելի է հիշատակել հետևյալը.

- տարածաշրջանի միջազգային քաղաքական գործընթացներում աղբբեջանական գործոնի քաղաքագիտական վերլուծությունն առաջին անգամ իրականացվել է ոչ թե մեկուսի, այլ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իրանի, Եվրամիության և Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության առաջնահերթությունների համատեքստում
- Աղբբեջանի արտաքին քաղաքական ազդեցության օբյեկտիվ լուսաբանման միջոցով բացահայտվել են այդ ազդեցության իրական հիմքերը (էներգակիրների տեղափոխում, նաժթային քաղաքականություն, տրանսպորտային և այլ հաղորդակցության ուղիների նկատմամբ ռազմավարական դիրք, միջազգային ծրագրերի իրականացում և այլն)

- ատենախոսության մեջ նորովի է ներկայացված ռուս-աղբբեջանական հարաբերություններում 1990-2004թթ. նկատված միտումները, որոնք առաջնային նշանակություն ունեն դարաբաղյան հակամարտության կարգավորման ճանապարհին հայկական շահերի նկատմամբ եղած մարտահրավերներին դիմակայելու համար

- նոր տեսանկյունով է հետազոտված Իրանի Իսլամական հանրապետության և Թուրքիայի հետ Աղբբեջանին մերձեցնող և վանող կրոնական և էթնիկական գործոնները

- բացահայտվել են միջազգային կառույցներում Իլիամ Ալիևի կառավարության նախաձեռնությունների նպատակները և դարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացում նրա ազդեցիկ ռիտորիկայի էությունը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և եղանակները:

Հետազոտության ողջ ընթացքում ձգտել ենք առավելագույնս պահպանել պատմականության սկզբունքը, քաղաքագիտական վերլուծությունը, եզրահանգումներն ու հետևությունները հիմնված են առաջին հերթին պատմական իրադարձությունների ու փաստերի վրա: Դիալեկտիկական մեթոդաբանությունը, պատմականության սկզբունքի պահպանումը և կանխակալ դիրքորոշումների շրջանցումը ապահովել են հետազոտման և ընդհանրացման եզրահանգումների ճշտությունը:

Աշխատությունը կատարված է քաղաքական գիտությունների բնագավառում կիրառվող գիտահետազոտական արդի մեթոդներով ու սկզբունքներով: Հեղինակն առաջնորդվել է պատմաբանական, համեմատական, համադրական եղանակներով և օգտագործել է նախորդ ուսումնասիրողների փորձը, նվաճումներն ու ձեռքբերումները, որոնք առկա են միջազգայնագիտական և քաղաքագիտական աշխատություններում:

Ատենախոսության կիրառական նշանակությունը:

Աշխատանքն ունի գիտագործնական, պատմաճանաչողական և քաղաքական նշանակություն: Այն կարող է ծառայել որպես հիմք քաղաքագետների, միջազգայնագետների և պատմաբանների համար տարածաշրջանի պետությունների միջև փոխհարաբերությունների հիմնահարցերի լուսաբանման բնագավառում, ինչպես նաև հետխորհրդային քաղաքական պատմության հիմնախնդիրների ուսումնասիրման գործում: Ատենախոսության մեջ հետազոտված նյութերը կարող են օգտագործվել քաղաքագիտության, քաղաքական պատմության, դիվանագիտության, ինչպես նաև հարավկովկասյան պետությունների և ուժային կենտրոնների փոխհարաբերությունների գործնական հարցերով զբաղվող հետազոտողների, քաղաքական գործիչների և դիվանագետների համար: Այս ամենի հետ մեկտեղ, ատենախոսության կիրառական նշանակությունը մեծամասամբ կապված է Հայաստանի արտաքին քաղաքականության և միջազգային դրության թիվ մեկ խնդրի՝ դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հետ: Այս առումով հարավկովկասյան տարածաշրջանի միջազգային-քաղաքական ասպարեզում աղբբեջանական գործոնի հետազոտության ցանկացած ասպեկտ ունի հստակ կիրառական նշանակություն բանակցային գործընթացներում ընդգրկված դիվանագետների և մյուս պետական գործիչների համար:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել

Հայաստանի ազգային անվտանգության և ազգային շահերի պաշտպանությանն առնչվող պետական փաստաթղթերի մշակմամբ զբաղվող մասնագետների կողմից: Դրանք կիրառական նշանակություն ունեն մաս քաղաքագիտության, աշխարհաքաղաքականության ու ժամանակակից համաշխարհային քաղաքականության ընդհանուր և նեղ մասնագիտական դասընթացների մշակման գործում:

Ատենախոսության կառուցվածքը. Ատենախոսության կառուցվածքը համապատասխանեցված է հետազոտության նպատակներին և խնդիրներին: Այն ունի չորս գլուխ և տասներկու ենթագլուխ

Ատենախոսության առաջին գլուխը՝ **Ադրբեջանի դերը տարածաշրջանի տնտեսական-տրանսպորտային ինտեգրացիոն գործընթացներում. քաղաքական ազդեցության տնտեսական հիմքերը**՝ վերտառությամբ, նվիրված է միջազգային տնտեսական և տրանսպորտային ինտեգրացիոն գործընթացներում Ադրբեջանի ունեցած դերակատարման բացահայտմանը, որն ըստ մեր աշխատանքային հիպոթեզի հանդիսանում է նրա քաղաքական ազդեցության հիմնաքարը: Գլուխը բաժանված է վեց ենթագլուխների:

Ակզբում հետազոտվել է Ադրբեջանի նավթային քաղաքականությունը և նավթային երկրորդ բուժը անկախության հռչակումից հետո, երբ նավթային խոշոր ընկերությունների հետ 1991թ. ստորագրվում է համաձայնագիր, ադրբեջանական «Ազերի» նավթահանքի հետազոտական և այլ տեխնիկական աշխատանքների շուրջ¹¹: Նավթային գործունը Ադրբեջանի ռազմավարության մշակման մեջ գերակայող է: Երկրի ռազմավարությունը հիմնված է «մենք շատ նավթ ունենք» գաղափարի վրա: Սակայն այս դոկտրինայի վրա հիմնված քաղաքականության առջև ի հայտ են եկել բազմաթիվ խոչընդոտներ, որոնցից առանձնացրել ենք հատկապես **Կասպից ծովի հիմնախնդիրը**:

Ադրբեջանի 90-ական թթ. նավթային քաղաքականության մեջ հաջորդը **նավթամուղերի հիմնախնդիրը** էր, որի վերտարածաշրջանային միջազգային քաղաքական նշանակությունը պահպանվում է մասն աչժմ : Դիվանագիտական սուր պայքարում, մշակվեցին երկու գլխավոր ուղիներ. Բաքվից մինչև վրացական սևծովյան նավահանգիստ Սուպսա և Բաքվից մինչև թուրքական միջերկրածովյան նավահանգիստ Ջեյհան: Ադրբեջանից թուրքիա անենաեժան ցամաքային ճանապարհը կարող էր լինել Իրանի կամ Հայաստանի տարածքի վրայով: Ասկայն իրանական տարբերակը ԱՄՆ-ի կողմից արգելափակվեց , որը ձգտում է բոլոր հնարավոր միջոցներով կանխել խողովակաշարերի կառուցման նախագծերի հետ կապված Իրանի բոլոր ձեռնարկումները: Հայկական ուղու իրագործումը տապալվեց Ղարաբաղյան հակամարտության պատճառով: Նավթամթերքի տեղափոխման երկրներական ուղիների որոնման ուղղությամբ կատարված առաջին լուրջ քայլը դարձավ Բաքու-Սուպսա նավթամուղի կառուցումը, որն իրականացվեց Ադրբեջանական միջազգային օպերացիոն կազմակերպության /ԱՄՕԿ/ հովանավորությամբ: 1997 թվականի հուլիսին

¹¹ Steu' Chronology of AIOC Oil Contract//Azerbaijan international, Socar Section, Winter 1994 (2.4), p.10-11.

Ս.Դեմիրելը և Է.Շևարդնաձեն ստորագրեցին համատեղ դեկլարացիա Բաքու-Վրաստան-Ջեյհան ուղու օգտին: Բաքու-Ջեյհան նախագիծը հետագա զարգացումը ստացավ 1998 թվականի մարտին Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի և Թուրքմենստանի արտգործնախարարների Ստամբուլում կայացած հանդիպման ժամանակ: 1998 թվականի հոկտեմբերին Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի նախագահների և ԱՄՆ-ի էներգետիկայի նախարարի կողմից ստորագրված Անկարայի դեկլարացիայում Բաքու-Ջեյհան նավթամուղը արդեն անվանվում էր ռազմավարական¹²:

Ադրբեջանը, տանուլ տալով դարաբաղյան պատերազմում, 1990-ական թթ. երկրորդ կեսին լուրջ ակնկալիքներ ուներ էներգետիկայի արդյունահանման և նավթամուղերի կառուցման միջոցով կորսված դիրքերի վերականգնման առումով:

Ադրբեջանական նավթի տեղափոխման ռազմավարական ուղին վերջնականապես որոշվեց 1999թ. ԵԱԿ Ստամբուլի գազաթաժողովի ժամանակ, երբ ստորագրվեց համաձայնագրերի փաթեթ հիմնական արտահանող նավթամուղի (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան) վերաբերյալ: Ստամբուլի հռչակագիրը, որով նախատեսվում էր նավթամուղի շինարարությունը և համակողմանի աջակցությունը, ստորագրեցին Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի, Թուրքիայի, ԱՄՆի նախագահները¹³:

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը հանդիսանում է տարածաշրջանում Միացյալ Նահանգների վարած էներգետիկ քաղաքականության հաջողության դրսևորումներից մեկը: Այդ նավթամուղի գործարկումով /2005թ./ ի չիք են դառնում Ռուսաստանի կողմից առաջարկվող էներգետիկայի արտահանման հյուսիսային ուղին (Բաքու-Նովորոսիսկ). ինչպես մաս Իրանի կողմից ակտիվորեն առաջ քաշվող հարավային ուղին, այսինքն՝ նավթամուղի կառուցումը Ադրբեջանից իր տարածքով դեպի Պարսից ծոցի իրանական նավահանգիստները:

Կասպից ծովի և նավթամուղերի հիմնախնդիրների ուսումնասիրումը հարավկովկասյան միջազգային քաղաքական գործընթացներում հնարավորություն է տալիս մաս բնութագրել **Ադրբեջանի նկատմամբ ԱՄՆ-ի, ԵՄ-ի և Մեծ Բրիտանիայի քաղաքականության էությունը**:

2000թ. ԱՄՆ նախագահական նոր ընտրությունների ընթացքում ձևավորված Ջորջ Բուշ-Կրտսերի նոր վարչակարգը առաջ քաշեց արտաքին քաղաքականության լրիվ նոր դոկտրինա: ԱՄՆ-ը մերժեց տարածաշրջանային կոնֆլիկտներին ակտիվ միջամտության քաղաքականությունը՝ ենթարկեցնելով իր գործողությունները ազգային շահերի պաշտպանությանը: Արևմուտքը և առաջին հերթին ամերիկա-բրիտանական բլոկը էներգետիկայի բիզնեսից շահույթ ստանալու առաջնայնությունից անցում կատարեց էներգառեսուրսների վստահելի ապահովման առաջնայնություն¹⁴: Ադրբեջանը նույնպես ունի իր հիմքերը ԱՄՆ-ի և Մեծ

¹² Steu' Гаджиев К.С, նշված աշխատությունը, էջ 433

¹³ Steu' Гусейнов В., Каспийская нефть. экономика и геополитика. М., 2002, стр. 281

¹⁴ Steu' www.armeniaway.com/aw/igor_muradian/Article_/nt, նշված աշխատությունը

Բրիտանիայի հետ համագործակցելու համար: Առաջին և գլխավոր հիմքը անվտանգությունն է և կայունությունը: Ադրբեջանը համոզված է, որ ԱՄՆ-ը /ՆԱՏՕ/ կարող է կարևոր դեր խաղալ տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման գործում: Մյուս հիմքը եվրաստլանտյան կառույցների ինտեգրվելու պաշտոնական կուրսն է: Ադրբեջանը գտնում է նաև, որ անգլո-ամերիկյան բլոկը կարող է օժանդակել երկրի ներքին խնդիրների լուծման հարցում¹⁵: Ադրբեջանի ձգտումը անդամակցել ՆԱՏՕ-ին թելադրվում է հսկայական ռազմական ծախսերից ազատվելու և վստահության բարենպաստ մթնոլորտ ստեղծելու ցանկությամբ, որում Ադրբեջանը կարող է իրականացնել դժվարին տնտեսական և քաղաքական ռեֆորմներ: Ադրբեջանը ՆԱՏՕ-ն դիտում է որպես մի ուժի, որի վրա հենվելով հնարավոր կլինի ապահովել երկրի տարածքային ամբողջականությունը: Ադրբեջանը ձգտում է հասկացնել, որ Ռուսաստանը խոչընդոտ չէ ՆԱՏՕ-ին անդամակցելու համար: Դրա ապացույցը Ադրբեջանի որոշումն էր դուրս գալ ԱՊՀ-ի Կոլեկտիվ Անվտանգության պայմանագրից:

Ադրբեջանի նավթային քաղաքականության ռազմավարական նպատակներին խոչընդոտում է Ղարաբաղյան հակամարտությունը: Պետք է նշել, որ Ադրբեջանը միշտ փորձել է «փոխել» նավթը դարաբաղյան հիմնահարցի լուծման հետ, սակայն բարեբախտաբար դա դեռ չի հաջողվում: Նավթի պատմությունը և Ղարաբաղյան կարգավորումը զարգանում էին տարբեր հարթություններով: Միակ ուղիղ կապը կարող էր լինել, եթե Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցվեր Հայաստանի վրայով: Միաժամանակ միջազգային կազմակերպությունների և արեւմտյան փորձագետների իրականացրած անկողմնակալ վերլուծությունը, որոնք ընդգրկված են Ղարաբաղյան խաղաղ կարգավորման գործընթացում, բավականին վերապահորեն են գնահատում Ադրբեջանի ուժային շանտաժի իրականությունը՝ հիմնված «նավթային գերշահույթների» վրա: Հիմնականում, նավթային գործոնի ազդեցությունը տարածաշրջանի ռազմականացման և Ղարաբաղյան հակամարտությունում ռազմական գործողությունների վերսկսման վրա, ուսումնասիրված և հրատարակված էր 2007թ. նոյեմբերին Միջազգային ճգնաժամային խմբի կողմից «ICG» հատուկ վերլուծական զեկույցում:

Ատենախոսության մեջ կարող ենք նշել մեր որոշ նկատառումները տարածաշրջանային անվտանգության և նավթամուղիների ու գազամուղիների փոխկապակցվածության մասին: Դեռևս ԲԹՁ նախագծի առաջ քաշման փուլում ակնհայտ էր, որ իրականում նավթատարի կառուցման հիմքում ընկած են ԱՄՆ-ի և նախագծին մասնակից եվրոպական պետությունների քաղաքական շահերն ու դրդապատճառները, որոնք հիմնականում միտված են հետևյալ նպատակների իրագործմանը՝

- նվազեցնել Ռուսաստանի դերը տարածաշրջանում,
- չեղքացնել Իրանի դերը տարածաշրջանում,
- ընդլայնել սեփական ազդեցությունը Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում,

- խրախուսել տարածաշրջանի նորանկախ երկրների՝ ինքնուրույն տնտեսական և ռազմավարական քաղաքականություն վարելու ձգտումները,
 - ստեղծել տարածաշրջանային քաղաքական նոր միջավայր (հնարավոր է՝ և դաշինք) տնտեսական շահավետ գործընկերության մեջ ընդգրկված երկրների համար,
 - ապահովել տարածաշրջանային և գլոբալ անվտանգության խնդիրները,
 - գնաստել տարածաշրջանային հակամարտությունների լուծմանը կամ զոհն ռազմական գործողությունների չվերսկսմանը:
- Ինչևէ, փաստն այն է, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը տարածաշրջանային գործընթացների ու իրողությունների վրա մեծ ազդեցություն ունեցող կայացած գործոն է, ինչը, օգտվելով սեփական աշխարհաքաղաքական դերակատարության բարձրացման հանգամանքից՝ Ադրբեջանը մեծ եռանդով փորձում է օգտագործել:

Առաջին գլուխն ավարտվում է *միջազգային տրանսպորտային հիմնախնդիրների ուսումնասիրմամբ*: Հարավային Կովկասի տրանսպորտային զարկերակների բարդ ցանցը հնուց ի վեր կամրջի դեր է կատարում Արևմուտքի և Արևելքի, Հյուսիսի և Հարավի միջև: Այդ ցանցը զգալի ներգործություն է ունենում Հարավային Կովկասի քաղաքական կլիմայի վրա: Յուրաքանչյուր փոփոխություն այդ ցանցի մեջ, երկաթուղու կամ ավտոճանապարհի յուրաքանչյուր նոր ճյուղավորում էապես ներգործում է տարածաշրջանում ուժերի հավասարակշռության վրա և ակտիվ հակազդեցության համագեցում:

Վերջին շրջանում լուրջ զարգացումներ են տեղի ունենում Հարավային Կովկասի տրանսպորտային ցանցի մեջ, համդես են գալիս նորանոր նախագծեր, որոնց մեջ զգալի դերակատարություն ունի նաև Ադրբեջանը: Վերջին շրջանում ակտիվացել է Ադրբեջանի դերակատարությունը «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի գործում: 2004թ. հուլիսին Իրանի մայրաքաղաք Թեհրանում տեղի ունեցավ Իրանի, Ռուսաստանի և Ադրբեջանի երկաթուղայինների առաջին աշխատանքային հանդիպումը, որտեղ կողմերը քննարկեցին երկաթուղու կառուցման և հետագա շահագործման իրավական, ֆինանսական և այլ ասպեկտները, ինչպես նաև քննարկվեցին երեք երկրների միջազգային կոնսորցիումի ստեղծման մանրամասները: Աստարա-Ռեշտ-Ղազվին երկաթուղու կառուցմամբ շահագործված են ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Իրանը: Երկաթուղին Ռուսաստանին հնարավորություն է տալիս կապվել իր գործընկեր Իրանի և նրա տարածքով նաև Հնդկաստանի հետ: Դրանով Ռուսաստանը ազդեցության ուժեղ տնտեսական լծակներ է ձեռք բերում Հարավային Կովկասում, բեռները ՏՐԱՍԵԿԱ միջանցքից շեղում է դեպի «Հյուսիս-Հարավ» միջանցք և խոշոր տրանզիտային շահույթներ է ստանում: Իրանը ևս մեծ հետաքրքրություն է ցուցաբերում այդ նախագծի վերաբերյալ: Իրանի աճող աշխարհաքաղաքական մեկուսացման պայմաններում Ադրբեջանի հետ ուղիղ երկաթուղու ստեղծումը հնարավորություն է տալիս Իրանին դուրս գալ արտաքին աշխարհ, մասնավորապես կայուն կապ ապահովել իր ռազմավարական գործընկեր Ռուսաստանի հետ և տնտեսական մեծ դիվիդենդներ ապահովել:

¹⁵ Տես՝ Кунз Ф., НАТО и страны Южного Кавказа: много шума из ничего? //Центральная Азия и Кавказ, 3(27), 2003, стр. 9

Աղբբեջանի համար նշյալ երկաթուղու կառուցման ռազմավարական կարևորությունը դժվար է գերազնահատել: Դրանով Աղբբեջանը ազատվում է Հայաստանով անցնող երկաթուղուց կախումից, ուղիղ կապ է ապահովում հարևան Իրանի և նրա միջոցով Պարսից ծոցի և Հարավային Ասիայի հետ: Աղբբեջանը կարող է հսկայական շահույթներ ստանալ բեռների տրանզիտից: Սակայն ամենակարևորն այն է, որ այդ երկաթուղու կառուցումով շոշափելի հարված է հասցվելու Հայաստանի տրանզիտ ներուժին: Աստարա-Ռեչտ-Ղազվիճ երկաթուղու կառուցման նախագծի իրականացման դեպքում Աղբբեջանը կհաղթահարի դարաբաղյան հիմնախնդրի հետևանքով առաջացած երկաթուղային շրջափակումը, այսինքն՝ հակամարտության բացասական ներգործությունը Աղբբեջանի վրա զգալիորեն կպակասի: Միաժամանակ Աղբբեջանը մեծ եկամուտներ կստանա երկաթուղու շահագործումից: Միաժամանակ պետք է նշել, որ Աղբբեջանի ակտիվությունը «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի շրջանակներում և սերտ համագործակցությունը Ռուսաստանի և Իրանի հետ ամենևին էլ չի նշանակում կտրուկ շրջադարձ Աղբբեջանի վարած արտաքին քաղաքականության մեջ և հրաժարում ինտեգրումից Արևմուտք-Արևելք միջազգային տրանսպորտային միջանցքի մեջ: Ընդհակառակը, Աղբբեջանը ձգտելով վերածվել տարածաշրջանում թիվ մեկ տրանզիտային պետության, փորձում է համատեղել այդ երկու ռազմավարական ուղղությունները և երկիրը վերածել խաչմերուկի Հյուսիսի և Հարավի, Արևմուտքի և Արևելքի միջև: Հենց այդ նպատակով Աղբբեջանը ակտիվորեն ներգրավվեց նաև Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցքի (TRASEKA - «Մետաքսե Մեծ ճանապարհ») մեջ, որը նախաձեռնվել է Եվրամիության կողմից 1998թ.:

TRASEKA-ի նպատակներից մեկն է միջանցիկ երկաթուղային հաղորդակցության ստեղծումը Եվրոպայի, Կովկասի և Ասիայի միջև՝ Փարիզից մինչև Շանհայ: Այդ գաղափարի իրականացման կարևորագույն նախադրյալներից է Վրաստանի և Թուրքիայի միջև երկաթուղային կապի ապահովումը: Հայ-թուրքական հարաբերությունների լարվածությունը, որի պատճառները բոլորին հայտնի են, թույլ չի տալիս Թուրքիային գնալ Հայաստանի հետ սահմանի բացմանը և Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթուղու վերագործարկմանը: Դրա փոխարեն Թուրքիան, Վրաստանը և Աղբբեջանը մտադիր են համատեղ ուժերով կառուցել Կարս-Ախալքալաք երկաթուղին: Աղբբեջանի ղեկավարությունը ի սկզբանե պաշտպանել է այդ երկաթուղու կառուցման գաղափարը: Արդյունքում 2004թ. օգոստոսին երեք երկրների տրանսպորտի նախարարների կողմից Անկարայում ստորագրվեց Աղբբեջանի, Թուրքիայի և Վրաստանի կառավարությունների մտադրությունների հուշագիր, Կարս-Ախալքալաք երկաթուղու կառուցման վերաբերյալ: Սրանով Հայաստանի մասնակցությունը TRASEKA ծրագրին կորցնում է իր գործնական իմաստը, քանի որ Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթուղին է հանդիսանում այս միջազգային տրանսպորտային միջանցքի բաղադրիչներից մեկը, որը կմատնվի անգործության և կկորցնի իր տնտեսական նշանակությունը այլընտրանքային Կարս-Ախալքալաք երկաթուղու կառուցմամբ: Միաժամանակ Աղբբեջանը հսկայական տնտեսական շահույթ կստանա երկաթուղու գործարկումից, կաճի երկրի

տարածքով բեռնափոխադրության ծավալը՝ որոշ հաշվարկներով՝ 7-10 մլն տոննայով: Աղբբեջանը կապահովի երկաթուղային կապը Թուրքիայի հետ՝ նույնպես չեզոքացնելով դարաբաղյան հակամարտության հետևանքով առաջացած բացասական տնտեսական հետևանքները:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Հայաստանը շրջանցող Կարս-Ախալքալաք երկաթուղու կառուցումը շոշափելի աշխարհաքաղաքական և տնտեսական առավելություններ է տալիս Աղբբեջանին, ամրապնդվում են նրա դիրքերը Հարավային Կովկասում, աճում է տրանզիտ պետության նրա դերը, Աղբբեջանը ստանում է հսկայական եկամուտներ երկաթուղու գործարկումից: Միաժամանակ, դա հանգեցնում է Հայաստանի տրանզիտային ներուժի խիստ նվազմանը, նրա դուրս մնալուն TRASEKA միջազգային տրանսպորտային միջանցքից և տարածաշրջանում երկրի միջազգային դիրքերի թուլացմանը:

Երկրորդ գլուխով՝ «Աղբբեջանական գործոնը Ռուսաստանի հարավ-կովկասյան քաղաքականության մեջ և ԱՊՀ միջպետական հարաբերություններում» վերտառությամբ, ունի երեք ենթագլուխ և նվիրված է հիմնականում ռուս-աղբբեջանական հարաբերությունների հետազոտությանը: Միաժամանակ Աղբբեջանական գործոնի ազդեցությունը Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության վրա միահյուսված է ԱՊՀ շրջանակներում Աղբբեջանի արտաքին քաղաքականության հետ, որն անհրաժեշտ է դարձնում դրանց զուգահեռ հետազոտությունը: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը մեծապես կապված է հայ-ռուսական ռազմավարական համագործակցության կայունությունից: Հնարավոր է, որ դարաբաղյան հակամարտության կարգավորումից և աշխարհաքաղաքական որոշակի տեղաշարժերից հետո իրավիճակը փոխվի, բայց հակամարտության պահպանման և ուժերի ներկա դասավորվածության պայմաններում հայ-ռուսական համագործակցությունը մնում է մեր անվտանգության հիմնական գրավականը: Այս հանգամանքը առավել հրատապ է դարձնում Ռուսաստանի հարավկովկասյան քաղաքականության մեջ աղբբեջանական գործոնի հետազոտման անհրաժեշտությունը, որովհետև Աղբբեջանի աշխարհագրական դիրքը և էներգետիկ ռեսուրսները էականորեն ծանրացնում են նրա կշիռը այն տարածաշրջանային միջազգային քաղաքական գործընթացներում, որոնց որ մասնակցում է հզոր հյուսիսային հարևանը: Եվ ավելորդ չէ նշել, թե ինչքան վտանգավոր կարող են լինել Հայաստանի և Դարաբաղի համար ռուս-աղբբեջանական մերձեցումները, եթե դրանք ընթանան Աղբբեջանին արվող զիջումների ուղիով:

Իհարկե, անկախության հռչակումից հետո Աղբբեջանի Հանրապետության ղեկավարներ՝ Այազ Մուլալիբովը, Աբուլֆազ էլչիբեյը և Հեյդար Ալիևը, մեծ ուշադրության էին արժանացնում ռուս-աղբբեջանական հարաբերությունների զարգացմանը և իրականացնում էին պաշտոնական և ոչ պաշտոնական այցելություններ դեպի Ռուսաստան: 1993թ. Ռուսաստանի Դաշնության և Աղբբեջանի Հանրապետության միջև կնքվեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության պայմանագիրը, որը վերակնքվեց 1997թ.: Սակայն Աղբբեջանի և Ռուսաստանի հարաբերությունները կարող են բնութագրել որպես փոխադարձ

անվտանգության և շարունակական բախումներով լի հարաբերություններ: Կայսրության և խորհրդային ժառանգությունը, Ռուսաստանի մշտական ձգտումը՝ թելադրել իր կամքը հարևաններին և ենթարկեցնել նրանց իր շահերին, Ադրբեջանում ստեղծել են Զյուսխից սպասվող սպառնալիքի մթնոլորտ: Զյուսխային հարևանը այնքան խորն է ներթափանցել կովկասյան խնդիրների մեջ, որ Ադրբեջանում Դարաբադյան խնդրի ճգնաժամը և նրա կարգավորման փակուղին դիտում են որպես ռուսական իշխանությունների գործողությունների արդյունք: Իլհամ Ալիևի օրոք ռոս-ադրբեջանական հարաբերություններում սկսում է գերակայող դառնալ պրագմատիզմի գործոնը: Մինչդեռ Ադրբեջանի անկախության առաջին տարիներին Ռուսաստանի հետ հարաբերությունները երկրորդ պլան էին մղվել: ՌԴ-ի մասին խոսում էին, ոչ այլ կերպ, քան «չարիքի կայսրության»¹⁶: 2004թ. փետրվարի 5-6-ին տեղի ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի առաջին պաշտոնական այցը Ռուսաստան: Այցելության արդյունքում կողմերի միջև ստորագրվեց Մոսկովյան Զոչակագիրը Ադրբեջանի և Ռուսաստանի միջև: Զոչակագրի մեջ երկկողմ հարաբերությունների մակարդակը բնորոշվում է, որպես ստրատեգիական համագործակցություն: Կողմերը համաձայնության են գալիս ամրապնդել երկկողմ ռազմատեխնիկական համագործակցությունը, որը ուղղված չէ երրորդ երկրների դեմ և չի հակասում ՌԴ-ի և Ադրբեջանի միջազգային պարտավորություններին: Զոչակագրի մեջ կա մի կարևոր դրույթ, ըստ որի կողմերից ոչ մեկը չի մասնակցելու ռազմական, տնտեսական և ֆինանսական բնույթի որևէ գործողություններում կամ միջոցառումներում, այդ թվում նաև երրորդ երկրների միջոցով՝ ուղղված մյուս կողմի դեմ, ինչպես նաև չի թույլատրելու, որ իր տարածքը օգտագործվի ագրեսիայի կամ այլ բռնի գործողությունների նպատակով մյուս կողմի նկատմամբ: Զոչակագրում նաև արձանագրվում է երկու պետությունների շահագրգռվածությունը երկկողմ առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության զարգացման գործում: Ադրբեջանի ղեկավարության պրագմատիկ արտաքին քաղաքականությունը Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերություններում տվեց իր դրական արդյունքները: 1990-ական թթ. Ռուսաստանի պետական և քաղաքական էլիտայի շրջանակներում Ադրբեջանի հանդեպ ձևավորված բացասական վերաբերմունքը սկսում է տեղի տալ տնտեսական շահին:

Ատենախոսության երկրորդ գլխում հետազոտվել են նաև ՎՈՒՌՄ-ին Ադրբեջանի մասնակցության քաղաքական հետևանքները և հատկապես ադրբեջանա-վրացական հարաբերությունները:

Ատենախոսության երրորդ գլուխը բաժանված է երկու ենթագլուխների և վերնագրված է *«Ադրբեջանը Իրանի Իսլամական հանրապետության և Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ. քաղաքական ազդեցության պահպանման կրոնական և էթնիկական լծակները»*: Այստեղ քաղաքագիտական վերլուծության առարկան իրանա-ադրբեջանական և թուրք-ադրբեջանական հարաբերությունների զարգացման միտումներն են 1990-2004թթ.:

¹⁶ Տես՝ Чернявский С.И., Новый путь Азербайджана, М., 2002, стр. 220

Իրանի Իսլամական Զանրապետության և Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ ադրբեջանական գործոնի հետազոտումը բավականին բարդ խնդիր է, որովհետև Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի շահերը ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ հակասություններ և բախման կետեր: Իր քաղաքական կշիռը բարձրացնելու համար Ադրբեջանը օգտագործում է ինչպես կրոնական (Ադրբեջանը և Իրանը մուսուլմանական երկրներ են և պատկանում են շիիթական ուղղությանը), այնպես էլ էթնիկական ընթանրության լծակները (Ադրբեջանցիները իրենց համարում են միասնական թուրքական ազգի մի ճյուղը)¹⁷:

Երկու ուղղություններում էլ Ադրբեջանը հանդիպում է լուրջ խոչնդոտների, որոնք ծնում են հակասական իրավիճակներ: Օրինակ բերենք մի քանիսը.

- Թեիրանում մեծ դժգոհությամբ է ընդունվում Ադրբեջանի արևմտամետ դիրքորոշումը, որն ընդհակառակը՝ ողջունում է Թուրքիան
- Սյունի Թուրքիայի համար, որն աշխարհիկ է, միշտ էլ տիպի է այն հանգամանքը, որ Ադրբեջանը շիա երկիր է և կրում է Իրանից եկող շիա արմատականության ազդեցությունը
- Ադրբեջանին գրգռում է Թեիրանի հայամետ քաղաքականությունը, իսկ Իրանին ադրբեջանական ազգայնականությունը երկրի հյուսիսային նահանգներում, որի բնակչությունը նույնպես խոսում է թուրքերենի ադրբեջանական տարբերակով և այլն:
- Ադրբեջանի կողմնորոշումը դեպի Արևմուտք և իր կողմից իրականացվող եվրատլանտյան ինտեգրման քաղաքականությունը
- Ադրբեջանի տարածքում ԱՄՆ գորակայանների հնարավոր տեղակայման վտանգը
- Ադրբեջանի աշխարհիկ պետական կարգին սպառնացող վտանգը Իրանի Իսլամական Զանրապետության կողմից
- Կասպից ծովի կարգավիճակի և նրա էներգետիկ ռեսուրսների բաշխման հիմնախնդիրը¹⁸:

«Ադրբեջանական հարցը» համարվում է Թեիրանի և Բաքվի միջև միջպետական լարվածության պատճառներից մեկը: Ժամանակին, Ադրբեջանի Զանրապետության գոյության սկզբում նախագահ Ա.էլչիբեյը հայտարարեց, որ ադրբեջանցիները պետք է միավորվեն միասնական պետության մեջ և ստեղծեն Զգոր Ադրբեջան: Իրանի Իսլամական Զանրապետության կառավարությունը գնահատեց դա որպես Իրանը քայքայելու փորձ: Զանրապետությունում ակտիվություն էր ցուցաբերում «Միասնական Ադրբեջանի համար» միավորումը, որը ժամանակին հիմնադրել էր Ա.էլչիբեյը, քննարկվում էին ադրբեջանական միասնականության հնարավորությունները, որոնք ծնում էին հակաիրանական

¹⁷ Ի դեպ կրոնական և էթնիկական ընդհանրությամբ գործոնը բավականին արդյունավետ օգտագործում է նաև Թուրքիան իր հեթոն Ադրբեջանի վրա ազդեցությունը պահպանելու համար (տես՝ Վահրամ Տեր-Մաթևոսյանի «Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում» մեմոարդյունը, Ե., 2008):

¹⁸ Տես՝ www.dailystar.com, 01.09.2009

տրամադրություններ¹⁹: էլիբեյին փոխարինած Յեյդար Ալիևը մեծապես մեղմացրեց այդ լարվածությունը, բայց խնդիրը շարունակում էր մնալ: Իր հերթին Իրանի ղեկավարությունը զարգացնում էր երկկողմ համագործակցությունը Չայաստանի հետ՝ ձգտելով դրանով ամրապնդել իր դիրքերը Չարավային Կովկասի տարածաշրջանում, նվազեցնել այստեղ Թուրքիայի ազդեցությունը: Իրավիճակային փոփոխություններ նկատվեցին միայն Իլհամ Ալիևի իշխանության գալուց հետո: Կարճ ժամանակում որակական նոր մակարդակի վրա բարձրացան ադրբեջանա-իրանական հարաբերությունները: Դրա հիմնական պատճառը աշխարհաքաղաքական այն լուրջ զարգացումներն էին, որոնք տեղի են ունեցել Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանում 2001թ. սեպտեմբերի 11-ի հայտնի դեպքերից հետո: Խոսքն առաջին հերթին գնում է Աֆղանստանում «Թալիբան»-ի իշխանության և Իրաքում Սադամ Յուսեյնի վարչակարգի տապալման մասին: Աֆղանստանում և Իրաքում տեղի ունեցած պատերազմների արդյունքում երկու երկրներում էլ հաստատվել են արևմտամետ վարչակարգեր, թերևս դեռ վաղ է խոսել դրանց կենսունակության մասին, քանի որ դրանք մեծ մասամբ հենվում են արտաքին ուժի վրա: Երկու երկրներում էլ տեղակայված են ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների զորամիավորումները, որոնք ամենայն հավանականությամբ տարածաշրջանը լքելու են միայն Իրաքում և Աֆղանստանում Արևմուտքին լոյալ վարչակարգերի հաստատումից և ամրապնդումից հետո:

Բավական է մի թուցիկ հայացք նետել Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական քարտեզին՝ հասկանալու համար, որ վերոհիշյալ աշխարհաքաղաքական փոփոխությունների արդյունքում Իրանը հետզհետե հայտնվում է աշխարհաքաղաքական մեկուսացման մեջ արևմուտքից՝ Իրաքից, արևելքից՝ Աֆղանստանից: Նման պայմաններում Իրանի համար խիստ կարևորվում է *հյուսիսային ուղղությունը, մասնավորապես Ադրբեջանը*: Այնհայտ է դառնում, որ հարկավոր է բարելավել հարաբերությունները Ադրբեջանի հետ՝ առաջին, թույլ չտալու համար երկրի շրջափակումը նաև հյուսիսից, երկրորդ, հուսալի կապ պահպանելու իր աշխարհաքաղաքական դաշնակից և գործընկեր Ռուսաստանի Դաշնության հետ, երրորդ, բացառելու համար Ադրբեջանում Արևմուտքի երկրների, հատկապես ԱՄՆ-ի զինված ներկայությունը և Ադրբեջանի տարածքի վերածումը մի նոր պլանցարմի Իրանի վրա հարձակման նպատակով, չորրորդ, թույլ չտալու համար Իրանի էթնիկ ադրբեջանցի բնակչության շրջանում անջատողական շարժման բոլորքումը, ինչը կարող է նաև օգտագործվել արտաքին ուժերի կողմից՝ Իրանում իշխող վարչակարգը տապալելու համար, *հինգերորդ*, ապահովել Իրանի մասնակցությունը տարածաշրջանային տնտեսական ծրագրերին: Այս ռազմավարական նպատակներին հասնելու համար Իրանի ղեկավարությունը արդեն պատրաստ էր գնալ մարտավարական մի շարք զիջումների Ադրբեջանին: 2004թ. տեղի ունեցան ԻԻՀ նախագահ Սեյեդ Մոհամադ Խաթամիի,

¹⁹ Sten՝ Сажин Владимир, К вопросу об ирано-азербайджанских отношениях //Центральная Азия и Кавказ, 4(34), 2004. Его же, К вопросу об ирано-азербайджанских отношениях //Сборник "Ближний Восток и современность". Под. ред. М.Р. Аруновой, А.О. Филоника, Выпуск 22, М., 2004, стр. 128-141:

ղեկտեմբերի 22-23-ին Իրանի պաշտպանության նախարար, փոխծովակալ Ալի Շամհանիի պաշտոնական այցերը Ադրբեջան, որը խթանեց երկկողմ համագործակցության խորացումը, ընդլայնվեցին նաև տնտեսական կապերը Իրանի հյուսիսային նահանգների և Ադրբեջանի միջև:

Յետագոտելով ադրբեջանական գործոնը Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ Սկզբից ևեթ նշենք, որ Խորհրդային Միության փլուզումը առաջ բերեց *Թուրքիայի* արտաքին քաղաքականության մեջ էական փոփոխություններ մտցրեց: Ժամանակակից շրջանում պանթուրքիզմը պաշտոնապես խնդիր չի դնում միավորել ԱՊՀ-ի թյուրքական ժողովուրդներին միասնական պետության մեջ՝ համարելով դա անթույլատրելի միջազգային հասարակական կարծիքի տեսանկյունից, սակայն հստկորեն ընդգծվում է Թուրքիայի ձգտումը ստեղծել միասնական մշակութային և սոցիալ-տնտեսական տարածություն բոլոր թյուրքական ժողովուրդների և երկրների համար Անկարայի գլխավորությամբ: Այս ճանապարհին Անդրկովկասում Թուրքիայի հիմնական դաշնակիցը Ադրբեջանն է: Առանց Անկարայի, Բաքվում քաղաքական կամ տնտեսական ոլորտի որևէ կարևոր որոշում չի ընդունվում: 1991 թվականի սեպտեմբերին կայացան առաջին պաշտոնական այցերը Ադրբեջանի և Թուրքիայի ղեկավարների միջև, որոնց ընթացքում կնքվել են համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր: 1992 թվականի հոկտեմբերին Անկարայում կայացավ Թուրքիայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի նահագահների և կառավարությունների ղեկավարների համաժողով, որտեղ քննարկվեց Թուրքիայի և «թյուրքական եղբայրների» միջև հաստիք հարաբերությունների հաստատման հարցը: Այդ նպատակով 1992 թվականին Թուրքիայի Արտգործնախարարությունում ստեղծվեց թուրքալեզու պետությունների հետ համագործակցության գործակալություն²⁰:

Թուրքիան և Ադրբեջանը ակտիվորեն համագործակցում են նաև ռազմական ոլորտում: 1993 թվականի ապրիլին Թուրքիան իրականացնում էր զենքի և զինամթերքի անմիջական փոխադրում դեպի դարաբաղյան ճակատ: Թուրքական ռազմական մասնագետները անմիջական մասնակցություն են ունենում Ադրբեջանի ռազմական ուժերի կառուցման մեջ: 1996 թվականին Թուրքիայի և Ադրբեջանի միջև կնքվել է ռազմական պայմանագիր, որը նախատեսում է փոխադարձ ռազմատեխնիկական, ռազմա-տեղեկատվական, բժշկական և կադրային աջակցության ցուցաբերում²¹: 90-ական թթ. վերջերին թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության ընդլայնում էր նկատվում: 1998թ. ապրիլին այս նպատակով Թուրքիայի Ձինված Ռժերի Գլխավոր Շտաբի պետ Իսմայիլ Չաքքը Քարադան այցելեց Բաքու և ռազմական համագործակցության շուրջ արդյունավետ բանակցություններ վարեց²²:

²⁰ Сваранц Александр, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе //Армянский институт международного права и политологии, Москва, 2002, стр. 167:

²¹ Sten՝ Мещеряков В., Российско-турецкие отношения: проблемы и перспективы // Независимая газета, 1997, 7, стр. 15-16:

²² Sten՝ Արշակյան Գ.Ս. Թուրքիայի քաղաքականությունը Չարավային Կովկասում

Անկարան Ադրբեջանում ստեղծում է հսկայական ենթակառուցվածք՝ կրեդիտային և կրթական հաստատություններ, մշակութային կենտրոններ, մզկիթներ:

Թուրքիայի՝ ԱՊՀ թյուրքալեզու երկրների հետ կապերի պետական նախարար Աբդուլհալուկ Չեյը 2000 թվականի հունվարի 19-ին Անկարայում հայտարարեց թյուրքական երկրների միության ստեղծման, Թուրքիայի՝ Ադրբեջանի, Ղազախստանի, Ղըրղզստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի հետ միավորվելու անհրաժեշտությունը, եթե նույնիսկ խիստ լարվեն ռուս-թուրքական հարաբերությունները: Նախարարը նաև ավելացրեց, որ Ռուսաստանը չափազանց թույլ է իրենց հակառակվելու համար²³: Այս ուղղությամբ Թուրքիան ակնկալում է նաև ԱՄՆ-ի աջակցությունը: Եվ դա պատահական չէ: ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները դիտում են Թուրքիան որպես Ադրբեջանի և մյուս երկրների համար քաղաքական և տնտեսական զարգացման օրինակ: Այդ քաղաքականությունը ամրապնդվում է Արևմտաքի ռազմավարական և տնտեսական շահերով /Կասպից ծովի ռեսուրսներ/: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը նշել է. «Մենք գնահատում ենք Թուրքիայի գործը ՆԱՏՕ-ում: Քառասուն տարիների ընթացքում Թուրքիան խաղացել է ՆԱՏՕ-ի հարավային ուղղության ամրոցի ռազմավարական դերը: Թուրքիան կանգնած է որպես օրինակ նրանց համար, ովքեր ձգտում են ազատ ընտրությունների և ազատ շուկայի»²⁴: 1999 թվականի սկզբին Ադրբեջանը պաշտոնապես հայտարարում էր իր տարածքում ՆԱՏՕ-ի /ամենից առաջ Թուրքիայի/ գործերի տեղակայման ցանկության մասին, դրան հաջորդեց Ադրբեջանի, Վրաստանի և Ուզբեկստանի՝ ԱՊՀ-ի Կոլեկտիվ անվտանգության համաձայնագրից դուրս գալը, ավելի ուշ Բաքուն հայտարարեց ՆԱՏՕ-ին անդամակցելու իր մտադրության մասին²⁵:

Ադրբեջանը օգտագործում է կրոնական ընդհանրության գործոնը նաև մյուս իսլամական երկրների հետ հարաբերություններում: Որպես հատկանշական օրինակ ուսումնասիրվել են ադրբեջանա-պակիստանյան հարաբերությունները:

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ «Ադրբեջանի արտաքին քաղաքական նախաձեռնությունները միջազգային կազմակերպությունների շրջանակներում» բաժանված է երեք ենթագլուխների: Այն նվիրված է հարավկովկասյան միջազգային քաղաքական գործընթացներում ներգրավված միջազգային կազմակերպություններում (ՄԱԿ, Եվրոպայի հարյուրորդ, ՆԱՏՕ, ԵԱՀԿ) Ադրբեջանի գործունեության հետազոտությունը: Ելնելով ատենախոսության ժամանակագրական շրջանակներից ուսումնասիրության համար վերցվել է 2003-2004թթ., որոնք համընկնում են Իլհամ Ալիևի իշխանության գալուց հետո այս կառույցներում Ադրբեջանի իրականացրած նախաձեռնությունների հետ: Իհարկե, ավելորդ չէ նշել, որ

1991-2001թթ., Եր., «Գիտություն» հրատ., 2009, էջ 99-100:

²³ Տես՝ Джилаван А., Турция бросила вызов России // Независимая газета, 2000, 21 января:

²⁴ Оганесян Н., США: в поисках новых ориентиров ближневосточной политики // Республика Армения, 1995 29 марта:

²⁵ Տես՝ Сваранц А., նշված աշխատությունը, էջ 541:

Ադրբեջանական նոր կառավարության գործունեությունը միջազգային կազմակերպություններում մեծամասամբ կապված է դարաբաղյան հակամարտության հետ: Բավական է հիշել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822, 853, 874 և 884 բանաձևերն՝ ընդունված 1993թ. ընթացքում՝ ռազմական գործողությունների ամենաեռուն շրջանում: Ադրբեջանի ղեկավարությունը միշտ էլ փորձել է կյանքի կոչել ՄԱԿ-ի ԱԽ վերոհիշյալ բանաձևերը, ըստ որում շեշտը դրվել է բանաձևերի այն դրույթների վրա, որտեղ պահանջվում է հայկական զինված ուժերի դուրսբերումը գրավված տարածքներից: Այսինքն, Ադրբեջանը օգտագործում է բանաձևերի միայն այն դրույթները, որոնք համատեղվում են Հայաստանը, որպես ագրեսորի և Ադրբեջանը, որպես զոհի ներկայացնելու քաղաքականության հետ: Միաժամանակ ադրբեջանական քարոզչական մեքենան ամեն կերպ մոռացության է մատնում Անվտանգության խորհրդի բանաձևերի այն դրույթները, որոնք նախատեսում են տնտեսական, տրանսպորտային, էներգետիկ և այլ կապերի վերականգնում, գործարկում և այլն:

Ադրբեջանի նոր ղեկավարությունը նախագահ Ի. Ալիևի օրոք շարունակեց իր ակտիվ քաղաքականությունը ՄԱԿ-ում: Գլխավոր ասամբլեայի 59-րդ նստաշրջանում 2004թ. հոկտեմբերի 14-ին Իլհամ Ալիևը՝ ՄԱԿ-ի ամբիոնից հայտարարեց, որ «Հայաստանը, անտեսելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի չորս բանաձևերը և ձգտելով վերջնականապես ամրագրել ռազմական ագրեսիայի արդյունքները, իրականացրել է գրավված ադրբեջանական տարածքներում հայկական բնակչության ապօրինի բնակեցման մեծ քաղաքականություն»²⁶:

Ադրբեջանի նախագահի հայտարարությունը, փաստորեն, իրենից ներկայացնում էր ծրագրային մի ելույթ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի գործում Ադրբեջանի արտաքին քաղաքականության վերաբերյալ: Ադրբեջանը հանդես եկավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի օրակարգի մեջ «Ադրբեջանի գրավված տարածքներում իրավիճակի մասին» հարցի ընդգրկման նախաձեռնությամբ: 2004թ. հոկտեմբերի 27-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի օրակարգում «Ադրբեջանի գրավված տարածքներում իրավիճակի» վերաբերյալ հարցը քննարկվեց ՄԱԿ-ի Գլխավոր կոմիտեում: Քննարկումների արդյունքում Կոմիտեն առաջարկեց հարցն ընդգրկել օրակարգի մեջ: Հոկտեմբերի 29-ին հարցը քննարկվեց արդեն Գլխավոր ասամբլեայում:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ը, ՌԴ-ն և Ֆրանսիան պաշտոնապես բացասաբար էին վերաբերում խնդրի առարկային: Ստեղծված պայմաններում, երբ ԵԱՀԿ Մինսկի խումբը դրսևորեց նման միասնական դիրքորոշում Բաքվի նախաձեռնության նկատմամբ, Ադրբեջանի ղեկավարությունը ստիպված էր տեղի տալ և փնտրել արդարացման միջոցներ: Այսպես, նախագահ Ալիևը հայտարարեց, որ իր կարծիքով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Ադրբեջանի գրավված տարածքներում իրավիճակի վերաբերյալ հարցի քննարկումը ոչ միայն չէր վնասի Մինսկի գործընթացին, այլև դրական նշանակություն

²⁶ Տես՝ «Зеркало», 28.10. 2004 г.

կունենար բանակցությունների համար: Բաքվի նախաձեռնությունը զուտ պատահականություն էր: Ղարաբաղյան հիմնախնդրի բարձրացումը տարբեր միջազգային ատյանների ամբիոններից նպատակ ունի միջազգային հանրության ուշադրությունն առավելագույնս կենտրոնացնել խնդրի այն ասպեկտների վրա, որոնք ձեռնտու են Ադրբեջանին: Այսպես, *Ադրբեջանը իրականացնում է Հայաստանին, որպես ագրեսորի, իսկ Լեռնային Ղարաբաղի ղեկավարությանը, որպես ահաբեկչական, անջատողական մարիոնետային ռեժիմի ճանաչման հստակ մարտավարություն:* Տեղի է ունենում հետևողական ճնշում միջազգային ատյաններում Հայաստանի դիրքերի վրա: Որքան կարելի է ավելի շատ միջազգային ատյաններ ընդգրկելով դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի մեջ, պաշտոնական Բաքուն մաս նպատակ ունի հասնել Մինսկի խմբի գործունեության արդյունավետության բարձրացմանը, այսինքն՝ փաստորեն ադրբեջանամետ մոտեցումների որդեգրմանը միջնորդների կողմից: Հակառակ դեպքում Բաքուն հստակ ազդակներ է ուղարկում համանախագահներին, որ Ադրբեջանը կարող է հրաժարվել Մինսկի խմբի ժառանգություններից և ընտրել միջնորդական այլ ֆորմատ:

Զնայած Բեռլինում տեղի ունեցած բանակցություններին, ադրբեջանական դիվանագիտությունը շարունակեց ՄԱԿ-ում իր ակտիվ ջանքերը: *Գլխավոր ասանթլեայի 59-րդ նստաշրջանի հերթական նիստում* տեղի ունեցան քննարկումներ Ադրբեջանի ներկայացրած բանաձևի նախագծի շուրջ, որտեղ հնչեց ադրբեջանական կողմի մի նոր պահանջ՝ ԵԱՀԿ-ի շրջանակներում ստեղծել փորձագետների խումբ, որը կզբաղվեր փաստահավաք գործունեությամբ գրավված տարածքների բնակեցման գործում:

Բանաձևի քննարկումների արդյունքում քվեարկություն տեղի չուներ: Որոշվեց այն հետաձգել անորոշ ժամանակով: Միջնորդները միաժամանակ իրենց հավանությունը տվեցին *ԵԱՀԿ փաստահավաք առաքելության* ստեղծմանը: Փաստորեն, կարելի է գալ այն եզրահանգմանը, որ հակամարտող կողմերը փոխզիջման գնացին, որի էությունը կայանում էր հետևյալում՝ Ադրբեջանը հրաժարվում էր հետագա քայլերից ՄԱԿ-ում բանաձևի ընդունման ուղղությամբ, առավել ևս բախվելով հայկական կողմի կոշտ արձագանքին և միջազգային հանրության դժգոհությանը, իսկ Հայաստանը դրա փոխարեն իր համաձայնությունն էր տալիս ԵԱՀԿ հատուկ առաքելության ստեղծմանը, որը պետք է ուսումնասիրեր դեմոգրաֆիական իրավիճակը գրավված յոթ շրջաններում:

Ադրբեջանի նախկին նախագահ Յեյդար Ալիևի և առավել ևս նրա որդի Իլիամ Ալիևի իշխանության օրոք Ադրբեջանը հետևողական աշխատանք է տանում *Եվրոպայի խորհրդի* տարբեր մարմիններում դարաբաղյան հակամարտության և նրա առանձին ասպեկտների արծարծման, այդ հարցում Եվրոպական այդ հեղինակավոր կառույցի քաղաքական բարենպաստ գնահատականին հասնելու գործում: Ադրբեջանական բարձրաստիճան պետական պաշտոնյաները, այդ թվում նաև դիվանագետները, Եվրախորհրդի ամբիոնից հանդես գալով, հատկապես շեշտը դնում են հակամարտության այնպիսի ասպեկտների վրա, ինչպիսիք են՝ Ադրբեջանի մի շարք շրջանների օկուպացիայի և երկրում մեծ թվով

փախստականների առկայության (ըստ պաշտոնական Բաքվի հայտարարությունների՝ մոտ մեկ միլիոն): Եվրոպայի խորհրդի հետ հարաբերություններում Ադրբեջանի հիմնական նպատակն է՝ հասնել Հայաստանի, որպես ագրեսորի, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, որպես անջատողական ռեժիմի ճանաչմանը այդ կազմակերպության կողմից: Եվրոպայի խորհրդի կողմից Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին Ադրբեջանի համար բարենպաստ գնահատական տալը կարող է հսկայական բարոյահոգեբանական ազդեցություն ունենալ: Մինչ օրս միջազգային կազմակերպություններից միայն Իսլամական կոնֆերանս կազմակերպությունն է, որ հատուկ բանաձևով որակել է Հայաստանը, որպես ագրեսոր և դատապարտել ադրբեջանական հողերի գրավման փաստը: Սակայն հասկանալի պատճառներով իսլամական աշխարհը միավորող այդ միջազգային կառույցի դիրքորոշումը չէր կարող քիչ թե շատ ներգործել միջազգային հանրության մոտեցումների վրա դարաբաղյան հիմնախնդրի հանդեպ: Մինչդեռ Եվրոպայի խորհրդի նմանատիպ բանաձևը կարող է լուրջ ազդակ հանդիսանալ հակամարտող կողմերի համար՝ դառնալով դարաբաղյան հիմնախնդրի հանդեպ միջազգային հանրության վերաբերմունքի և մոտեցումների յուրօրինակ ինդիկատոր:

Ադրբեջանական դիվանագիտությունը հատկապես մեծ ակտիվություն է դրսևորում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում: Պետք է նշել, որ դեռևս *2002թ. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի /ԵԽԽՎ/ ամառային նստաշրջանի* ժամանակ վեհաժողովի սոցիալիստական խմբակցության ղեկավար, Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի անդամ *Թերի Ղևիսը* նշանակվեց գեկուցող Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ, որին փոխարինեց նորից բրիտանացի պառլամենտական *Ղևի Ատկինսոնը:*

2005թ. հունվարի 25-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը երկար քննարկումներից հետո ընդունեց «Հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի շուրջ, որով զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը» անունը կրող Դ. Ատկինսոնի զեկույցը: Ձեկույցը բաղկացած էր երկու մասից՝ բանաձևից (15 կետ) և հանձնարարականից (10 կետ):

Բանաձևը շատ ավելի բարենպաստ դրույթներ էր բովանդակում Ադրբեջանի, քան Հայաստանի համար: Մասնավորապես, բանաձևում տեղ էին գտել այնպիսի վտանգավոր ձևակերպումներ, ինչպիսիք են՝ հայկական ուժերի կողմից Ադրբեջանի տարածքների գրավումը, Լեռնային Ղարաբաղի անջատողական ուժերը, էթնիկական գտումները, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի կատարման և բոլոր գրավված շրջաններից զորքերի դուրս բերման կոչը և այլն:

Արդարացի լինելու համար պետք է նաև նշել, որ բանաձևում պարունակվում են նաև Ադրբեջանի համար ոչ ձեռնտու կետեր, ինչպիսիք են՝ առանց նախապայմանների Լեռնային Ղարաբաղի երկու համայնքների քաղաքական ներկայացուցիչների հետ Ադրբեջանի կողմից ուղղակի շփումներ հաստատելու անհրաժեշտությունը, *ինչպես նաև պետության կազմից նրա տարածքի մի մասի դուրս գալու և անկախանալու գործընթացի ժողովրդավարական պաշտպանության անհրաժեշտությունը այդ տարածքի*

բնակչության կողմից: Վերջինն, ըստ էության հող է նախապատրաստում Լեռնային Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու համար:

Ադրբեջանական զործոնը ուրույն դեր ունի անվտանգության արդի ամենահզոր միջազգային կազմակերպության՝ **ՆԱՏՕ-ի հարավկովկասյան քաղաքականության մեջ**, որն անշուշտ պայմանավորված է հետևյալում: Նախապես տարածաշրջանը հետևում է ՆԱՏՕ-ի համար առանցքային նշանակություն ունի թե՛ տարածաշրջանային և թե՛ համաշխարհային անվտանգության տեսանկյունից: Հարավային Կովկասի պետությունները, մասնավորապես Ադրբեջանը և շահագրգռված է ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների զարգացմամբ: Այսօր ՆԱՏՕ-ի և Ադրբեջանի միջև համագործակցության և ինտեգրման հիմնական ձևաչափ շարունակում է մնալ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրը: 2004թ. հունիսի վերջին Ստամբուլում տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի գագաթնաժողովը, որին Ադրբեջանը մասնակցեց բարձրագույն՝ նախագահի մակարդակով: Գագաթաժողովը ևս մեկ անգամ ցույց տվեց ՆԱՏՕ-ի աճող հետաքրքրությունը Հարավային Կովկասի նկատմամբ, որն արտացոլվեց գագաթաժողովի արդյունքում ընդունված կոմյունիկեում Ստամբուլի գագաթաժողովն Ադրբեջանի համար կարևորվում է նաև նրանով, որ պաշտոնական Բաքուն Հյուսիս-ատլանտյան դաշինքին ներկայացրեց ամհատական համագործակցության ծրագիրը, որն ինչպես գիտենք, հանդիսանում է ՆԱՏՕ-ին ինտեգրման հերթական կարևոր փուլը:

ՆԱՏՕ-Ադրբեջան հարաբերությունների հետևողական զարգացումը և խորացումը շարունակվում է: Այսպես, 2004թ. ընթացքում Ադրբեջան այցելեցին ՆԱՏՕ-ի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ գլխավոր քարտուղար Յապա դե Հուպ Սիեֆերը, նրա տեղակալ Ժան Ֆուրնեն, Եվրոպայում ամերիկյան զորքերի հրամանատարի տեղակալ գեներալ Չարլզ Ուոլդը և այլն: Դա վկայում է Ադրբեջանի և ողջ տարածաշրջանի հանդեպ դաշինքի աճող հետաքրքրության մասին: 2004թ. նոյեմբերին Բաքու կատարած իր այցելության ժամանակ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը նշեց, որ Ադրբեջանը ավանդաբար հանդիսանում է դշինքի ծրագրերի ամենակապիվ մասնակիցներից մեկը, և դաշինքը գնահատում է Ադրբեջանի դրական և դինամիկ ներդրումն այդ ծրագրերի զարգացման մեջ: Ճիշտ է, թե՛ Ադրբեջանը և թե՛ ԱՄՆ-ը պաշտոնական մակարդակով բազմիցս հայտարարել են, որ չի նախատեսվում ամերիկյան զորակազմների տեղակայում Ադրբեջանում, ինչը նաև արգելված է օրենսդրորեն, սակայն դրա հետ մեկտեղ դաշինքի ղեկավարության ներկայացուցիչները պարբերաբար պատրաստակամություն են հայտնում ստանձնելու կառուցվող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի անվտանգության ապահովումը փոքր, շարժունակ ուժերի միջոցով:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ անդամակցությունը ՆԱՏՕ-ին շարունակում է մնալ Ադրբեջանի արտաքին քաղաքականության առաջնայնությունների թվում: Սակայն միաժամանակ Ադրբեջանը ստիպված է ավելի զգուշորեն գործել այդ ուղղությամբ, քան Վրաստանը՝ նկատի ունենալով Ռուսաստանի և Իրանի հնարավոր սուր հակազդեցությունը:

1990-2004թթ. Ադրբեջանական զործոնի դերի քաղաքագիտական վերլուծությունը հարավկովկասյան տարածաշրջանի միջազգային քաղաքական գործընթացներում հնարավորություն տվեց կատարել հետևյալ եզրահանգումները.

- Ադրբեջանի աշխարհաքաղաքական դիրքը, նրա նավթային մեծ պաշարները ուղենիշ են հանդիսանում ճկուն արտաքին քաղաքականության կուրս մշակելու համար:
- ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Կասպյան տարածաշրջանը հանդիսանում է Արևելք-Արևմուտք և Հյուսիս-Հարավ հակադրությունների հանգուցակետը: Այս տարածաշրջանին հավակնում են Ադրբեջանը, Իրանը, Ռուսաստանը, Ղազախստանը և Թուրքմենստանը: Հավակնող պետությունների միջև բանակցությունները դեռևս ընթանում են, որն ինքնաբերաբար բարձրացնում է Ադրբեջանի միջազգային հեղինակությունը:
- Ադրբեջանը՝ որոշիչ դեր է խաղում գլոբալ քաղաքական և տնտեսական գործընթացների շղթայում և Արևելքը Արևմուտքին կապող TRASECA /Մետաքսի Մեծ ճանապարհ/ ծրագրում:
- Ադրբեջանը հոգևոր-կրոնական դաշտում համագործակցում է տարածաշրջանի երկու հզոր երկրների՝ Իրանի և Թուրքիայի հետ: Ադրբեջան-ցիններին և պարսիկներին միավորում են ոչ միայն տարածքային մերձավորությունը, ընդհանուր շահերը, այլև կրոնը՝ շիիզմը, երկու էթնոսների բարքերի և սովորույթների մոտությունը: Այդքան ընդհանրություններ ունենալու հետ մեկտեղ Իրանը և Ադրբեջանը ունեն բավականին հակասություններ կասպյան հիմնախնդրի և իրանական ադրբեջանցիների հարցում: Չնայած Թուրքիան սուներիական երկիր է, նա Ադրբեջանում ստեղծել է ավելի ամուր հիմքեր և առաջ է տանում իր պամթուրքական քաղաքականությունը:
- Ադրբեջանի նոր ղեկավարության օրոք Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում երկրի որդեգրած արտաքին քաղաքական գծի մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ, եթե նախորդ ղեկավարությունը, ԵԱՀԿ Մինսկի խումբը մեղադրելով անարդյունավետ աշխատանքի մեջ, այնուամենայնիվ չէր փորձում փնտրել կարգավորման այլ ֆորմատ, ապա Ալիև-որդու օրոք, պաշտոնական Բաքուն, ակտիվ գործունեություն է ծավալել միջազգային այլ հեղինակավոր կառույցները բանակցային գործընթացի մեջ այս կամ այն կերպով ներառելու ուղղությամբ: Միջազգային կազմակերպությունները բանակցային գործընթացի մեջ ներգրավման Ադրբեջանի մասն վարքագիծն, ըստ էության նպատակ ունի բարելավել Ադրբեջանի բանակցային դիրքերը, հասնել միջազգային հանրության կողմից Ադրբեջանի ճանաչմանը, որպես հայկական ագրեսիայի գոհի:
- Նշանակալի փոփոխություններ են գծագրվում նաև Ադրբեջանի վարած տարածաշրջանային քաղաքականության մեջ: Այդ փոփոխությունները մասնավորապես վերաբերում են ադրբեջանա-ռուսական, ադրբեջանա-իրանական և ադրբեջանա-վրացական հարաբերություններին: Ըստ

որում, եթե առաջին երկու դեպքերում խոսքը գնում է երկկողմ հարաբերություններում առաջընթացի, գոյություն ունեցող լարվածության աստիճանական հաղթահարման և համագործակցության նոր ոլորտների նախանշման մասին, ապա երրորդ դեպքում, չնայած արտաքին հանդարտությանը և քիչ թե շատ էական հակասությունների բացակայությանը, արձանագրվել են հակադիր զարգացումներ:

- Ռուսաստանի հետ հարաբերություններում Ադրբեջանի նոր նախագահը որդեգրել է պրագմատիկ արտաքին քաղաքական կուրս: Ադրբեջանա-ռուսական երկկողմ հարաբերություններում վերջին շրջանում առաջին պլան է մղվում **տնտեսական բաղկացուցիչը**:
- Չետագոտության ենթարկված ժամանակաշրջանում որակական փոփոխություններ են տեղի ունեցել Բաքվի և Թեհրանի փոխհարաբերություններում: Ադրբեջանա-իրանական մերձեցմանը նպաստել են աշխարհաքաղաքական զարգացումները Մերձավոր և Միջին Արևելքում: ԱՄՆ-ը հետևողական կերպով իրականացնում է Իրանի միջազգային մեկուսացման քաղաքականություն և արդեն զգալի հաջողությունների է հասել այդ գործում: Լարվածությունը Իրանի միջուկային ծրագրի շուրջ վերջին շրջանում այնքան է սրվել, որ Վաշինգտոնը աներկիմաստ կերպով ակնարկում է Իրանի դեմ ռազմական գործողություններ սկսելու հավանական լինելը: Ներկայումս Իրանը արևմուտքից և արևելքից շրջապատված է ամերիկյան զորակայաններով, իսկ հարավում՝ Պարսից ծոցում առկա է ամերիկյան ռազմական նավատորմի ներկայությունը: Նման պայմաններում Իրանի համար կարևորվում է հյուսիսային ուղղությունը՝ Հարավային Կովկասի երկրները և առաջին հերթին **Ադրբեջանը**, որոնց միջոցով նա կարող է կապվել Ռուսաստանի հետ:
- Չնայած վրաց-ադրբեջանական հարաբերություններում նկատված բացասական միտումներին, երկու երկրների համագործակցությունը երկուստեք շահավետ է տարբեր տարածաշրջանային ծրագրերի (TRASECA, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ, Կարս-Ախալքալաք երկաթուղի) շրջանակներում, ինչպես նաև եվրասիական տարածքային ինտեգրման ռազմավարությունը շարունակում են մնալ այն հիմնարար գործոնները, որոնք երկարաժամկետ կտրվածքով կանխորոշելու են երկու երկրների ռազմավարական համագործակցությունը:
- Ադրբեջանի տարածաշրջանային քաղաքականության մեջ ավելի էական դեր է խաղում ինտեգրումը տարբեր տարածաշրջանային տնտեսական ծրագրերին, որոնք են Ադրբեջանի անդամակցությունը «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքին և Ռուսաստանը Իրանի հետ իր տարածքով կապող երկաթուղու կառուցման ակտիվ աշխատանքները, Ադրբեջանը Վրաստանի և Թուրքիայի հետ կապող Ախալքալաք-Կարս երկաթուղու կառուցումը և այլն: Մասնակցելով այս տարածաշրջանային ծրագրերին՝ Ադրբեջանը ձգտում է լիովին իրացնել իր տրանզիտ ներուժը ու միաժամանակ սահմանափակել Հայաստանի տրանզիտային հնարավորությունները: Վերոհիշյալ երկու նախագծերի իրականացման դեպքում Հայաստանը, ըստ էության, դուրս կմնա Հարավային Կովկասով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքներից, իսկ նրա անդամակցու-

թյունը «Հյուսիս-Հարավ» և «TRASECA» միջանցքներին կդառնա ձևական:

Ատենախոսության փորձաքննությունը. ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Ռուս-Հայկական /սլավոնական/ համալսարանի Համաշխարհային քաղաքականության ամբիոնի կողմից: Չետագոտության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական աշխատություններում.

1. Ռուս-ադրբեջանական հարաբերությունները 1990-2004թթ., Վասն Արդարութեան, Իրավական գիտամեթոդական հանդես, թիվ 4 /67/, 2008, էջ 39-46:
2. Ադրբեջանի նախաձեռնությունները Սիավորված Ազգերի կազմակերպությունում 2003-2004թթ «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես հասարակական գիտություններ, թիվ 4/24/, 2009, էջ 15-18:
3. Ադրբեջանը Իրանի Իսլամական հանրապետության տրածաշրջանային քաղաքականության մեջ (1990-2005թթ.), «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես հասարակական գիտություններ, թիվ 4/24/, 2009, էջ 19-24:
4. Ռուսաստանի հարավկովկասյան քաղաքականությունը և ադրբեջանական գործընթացը, Բանբեր Երևանի համալսարանի (Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն), թիվ 130.6, 2010, էջ 36-43:
5. Ադրբեջանի դերը տարածաշրջանի տնտեսական-տրանսպորտային ինտեգրացիոն գործընթացներում 1990-2004թթ., Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1/42/, «Ասողիկ» Իրատ., Երևան, 2010, էջ 251-260:

Оганесян Ваник Каренович

Роль азербайджанского фактора в международно-политических процессах южнокавказского региона 1990-2004гг. (политологический анализ)

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 "Политические институты и процессы". Защита состоится 7 июня 2011г. в 15:00 часов на заседании специализированного совета 056 ВАК РА действующего по адресу: ул. К.Улнеци 56/6, Ереван 0037, Армения.

Резюме

Цель исследования заключается в комплексном анализе азербайджанского фактора в международно-политических процессах южнокавказского региона. Хронологические рамки работы охватывают 1990-2004гг. Структура работы подчинена целям и основным задачам исследования и состоит из введения, четырех глав, заключения и списка использованной литературы. Во введении обосновывается актуальность исследования, представлены основные цели и задачи исследования, исторические рамки, методология, краткий обзор использованной научной литературы и международно-правовых документов, а также теоретическое и прикладное значение диссертации.

Чтобы сделать наблюдения полными и обеспечить значимость их применения, была исследована роль Азербайджана в территориальных интеграционных экономико-транспортных процессах, экономические основы чрезмерной стабильности ее внешней политики, использование механизмов религиозной и этнической общности со стороны Азербайджана в контексте территориальной политики Исламской Республики Ирана и Турции, азербайджанский фактор в южно-кавказской политике России и межгосударственных отношениях СНГ и под маской процессов мирного регулирования карабахского противоборства, сущность внешнеполитической инициативы Азербайджана в международных организациях.

Первая глава тезиса: роль Азербайджана в территориальных интеграционных экономико-транспортных процессах, под названием «экономические основы политического влияния», посвящен раскрытию роли Азербайджана в международных интеграционных экономико-транспортных процессах, что по гипотезе нашей работы является основой ее политического влияния. Глава состоит из шести подглав. Исследовалась нефтяная политика Азербайджана и проблемы нефтепроводов. Исследование Каспийского моря и проблемы нефтепроводов в южно-кавказском международном процессе, дает возможность характеризовать также сущность политики США, ЕС и Великобритании к Азербайджану. Первая глава заканчивается исследованием международных транспортных проблем.

Вторая глава – «азербайджанский фактор в южно-кавказской политике России и межгосударственных отношениях СНГ», имеет три подглавы и посвящена в особенности исследованию русско-азербайджанских отношений. Одновременно влияние азербайджанского фактора на территориальную политику России связано с внешней политикой Азербайджана в рамках СНГ, что и делает их параллельное исследование обязательным.

Третья глава тезиса состоит из двух подглав и посвящена следующему: «Азербайджан в территориальной политике Исламской Республики Ирана и Турции, религиозные и этнические рычаги в политическом влиянии». Здесь предметом политологического исследования являются намерения развития 1990-2004гг. иранско-азербайджанских и турецко-азербайджанских отношений.

Четвертая глава тезиса: «Внешиполитические инициативы Азербайджана в рамках международных организаций» состоит из трех подглав. Она посвящается исследованию деятельности Азербайджана в международных организациях, включенных в южно-

кавказские международные процессы (ООН, ЕС, НАТО, ОБСЕ). Исходя из хронологических рамок тезиса, для наблюдения брался период 2003-2004гг., который совпадает с реализованными Азербайджаном в этих институтах инициатив после пришествия ко власти Ильхама Алиева.

Содержание диссертации можно представить в следующих положениях:

- Приоритеты энергетической безопасности в современном мире диктуют Азербайджану в основе своей внешнеполитической доктрины ставить те привилегии, которые связаны с возможностями экспорта и транспортировки нефти и других энергоресурсов. Конечно, энергетический и транзитный потенциал увеличивает вес Азербайджана в международной политике. Но, как не странно, политическая элита страны часто сталкивается с серьезными препятствиями в сфере внешней политики, когда начинает переоценивать роль нефтяной дипломатии. В этом можно убедиться, рассматривая региональные политические процессы в постсоветский период.

- Присутствие крупных транснациональных нефтяных монополий приводит с собой внешней политике диктат и принуждение определенных правил игры, которые не всегда соответствуют государственным интересам страны. С другой стороны, сегодня нефтяные перспективы Азербайджана довольно ограничены. Ограничены также возможности «ресурсного процветания» страны. Азербайджан как будто находится в сфере воздействия ресурсного мифа. Поэтому «нефтяная стратегия» страны иногда приводит к политической близорукости и провалам.

- В результате новой геополитической ситуации вместо двух прикаспийских государств (СССР и Иран) появились пять государств (добавились Азербайджан, Казахстан и Туркменистан), со своими претензиями к каспийским нефтяным ресурсам. И неслучайно, что в постсоветском периоде разделение Каспийского моря стало актуальной проблемой и фактором конфронтации, а не сотрудничества прикаспийских государств. Имея энергетические запасы, Азербайджан и другие каспийские государства, оказались в трудной ситуации. Поблизости они не имеют крупных потребителей энергоресурсов, мощных нефтяных, газовых магистралей и морских коммуникаций. Эти обстоятельства ставят их в зависимость от России. Получается так, что параллельно с повышением международной роли, нефть также приносит сложные проблемы, рождает напряженность, противоречия и зависимость от соседей и ведущих мировых держав.

- Следующей в нефтяной политике Азербайджана в 90-ые годы была проблема нефтепроводов. В вопросе выбора путей транспортировки каспийской нефти сталкивалось много интересов. Построенный нефтепровод Баку – Джейхан был результатом удачной региональной энергетической политики США. США стремятся удалить от России страны Центральной Азии, что ослабит региональные позиции Азербайджана. В итоге, усиление американского влияния принесло с собой некоторые проблемы с Россией и Ираном. С началом эксплуатации нефтепровода Баку – Джейхан провалились планы России и Ирана по перевозке энергоносителей по северному (Баку - Новороссийск) и южному (через иранскую территорию в Персидский залив) путям. После президентских выборов 2000г. вновь сформированная администрация Джорджа Буша-младшего, выдвинула новую внешнеполитическую концепцию. США отказались от политики активного вмешательства в региональные конфликты, отдавая предпочтение защите национальных интересов. Фактически, усиления региональных позиции Азербайджана с американской поддержкой так и не получилось.

- Избегая тенденциозности, можно утверждать, что роль Азербайджана в экономических, транспортных и коммуникационных процессах, однозначно способствовала повышению его политического веса на Западе. Но Азербайджан всегда терпел провал, когда стремился обменять нефть на решение карабахской проблемы. Карабахское урегулирование и история нефтепровода развивались разными путями. Они могли бы быть связаны, если бы нефтепровод Баку – Джейхан прошел по территории Армении, но сформированное в 1988г. новое правительство в Ереване отвергло увязку

этого вопроса с решением карабахского конфликта.

- Обладание нефтяным богатством в ряде случаев приносит с собой внутривнутриполитически и экономически нежелательные последствия. В частности, и Азербайджан является примером отрицательного воздействия нефтяного фактора на демократические процессы. Контроль над углеводородными ресурсами лишает руководство нефтедобывающих стран возможности создания предпосылок для ротации политических элит и разделения властей. Власти покупают свою легитимность - или с помощью нефтедолларов, или полицейским насилием, - вместо конкурентной борьбы и демократических выборов. В перспективе, государство попадает в полную зависимость от экспорта природных богатств и становится уязвимым не только в политической, но и экономической и социальной сферах.

Анализ экспертов международных организаций и западные политологи довольно сдержанно оценивают реальность силового шантажа Азербайджана на основе "нефтяных сверхприбылей". Воздействие нефтяного фактора на милитаризацию региона и возможность возникновения военных действий в карабахском конфликте исследовано и опубликовано в ноябре 2007 года в докладе Международной кризисной группы (ICG).

- Южнокавказская политика России и западных держав нацелена на упрочнение геополитических позиций, сохранение широких возможностей по эксплуатации энергетических ресурсов, упрочнение позиций собственного капитала, контроль над коммуникациями. Эти стратегические интересы диктуют политику удержания Азербайджана под своим контролем. Одновременно, прозападная внешняя политика Азербайджана и его стремление устранить Россию от строительства нефтяных и газовых трубопроводов встречает резкое сопротивление Кремля. С другой стороны, стратегическое российско-армянское сотрудничество еще более осложняет российско-азербайджанские отношения.

- Южный Кавказ и особенно Азербайджан занимают важное место во внешней политике Турции и Ирана. После распада СССР они постоянно стремились упрочнить свои позиции в Азербайджане, но в ирано-азербайджанских отношениях сохранялось напряжение в связи с карабахским конфликтом и этническими проблемами азербайджанского населения Ирана. В Баку всегда критиковали дружескую позицию Ирана по отношению к Армении, а в Тегеране очень болезненно реагировали на прозападную политику Азербайджана и его сближение с НАТОвской Турцией, рассматривая последнее как угрозу национальной безопасности Исламской Республики. Несмотря на эти трудности, новый президент Азербайджана И.Алиев смог в 2004-2005гг. значительно улучшить ирано-азербайджанские отношения. Были подписаны десять международных договоров по энергетике, транспорту и безопасности.

- После прихода к власти Ильхама Алиева, Азербайджан в 2004г. внес некоторые предложения в ООН, которые были связаны с Карабахским конфликтом. Выступив 14 октября 2004 года на 59-й сессии ООН, И.Алиев заявил, что Армения не выполняет 822, 853, 874 и 884 резолюции ООН и осуществляет перенаселение на «оккупированных» районах Азербайджана. Азербайджану удалось включить в повестку генеральной Ассамблеи ООН вопрос о ситуации на «оккупированных» азербайджанских территориях. Эта инициатива не была одобрена сопредседателями минской группы. Обсуждение состоялось 23 октября, во время очередного заседания 59-ой сессии ГА ООН. Тем не менее голосование не состоялось, и было принято компромиссное решение: Азербайджан снял свои предложения, а Армения дала свое согласие на создание особой миссии ОБСЕ по изучению демографического положения на указанных территориях.

Vanik Hovhannisyan

The Role of Azerbaijani Factor in International Political Processes in the South Caucasian Region 1990-2004 (Political Analysis) Dissertation under 23.00.02 chiper - " political institutions and processes" (Political sciences) aspiring to earn a PhD in Political Sciences.

The public defense of the desertation will take place on June 7, 2011, at 15:00, in the National Strategic Research Institute under the MoD of RA at the 056 HAC Specialized Chamber session (Address: K. Ulntsi str. 56/6, Yerevan 0037, Armenia)

Resume

The purpose of the study is the analysis of Azerbaijan factor in international political development of the South Caucasus region. Chronological framework covers 1990 to 2004 years. The structure of the work serves the purposes and the basic tasks of the study and consists of introduction, four chapters, conclusion and the list of works. In the introduction the stress made on actuality of the study, the basic aims and the objects of the study, historical bounds, methodology, short review of the list of science works and international legal documents, also the theoretical and applied meaning of the thesis are presented here.

To make observations and to provide full value for their application, has been investigated the role of Azerbaijan in the regional integration of economic and transport processes, economic fundamentals over the stability of its foreign policy, the use of the mechanisms of religious and ethnic communities from Azerbaijan in the context of regional policy of the Islamic Republic of Iran and Turkey, Azerbaijan Factor in the South-Caucasian policy of Russia and the CIS inter-state relations and processes under the guise of peaceful regulation of the Karabakh confrontation, the essence of foreign policy initiative of Azerbaijan in international organizations.

The first chapter of the thesis: the role of Azerbaijan in territorial integration of economic and transport processes, called "the economic foundations of political influence", is devoted to the role of Azerbaijan in the international integration of economic and transport processes, the hypothesis of our work is the foundation of its political influence. Chapter is divided into six subchapters. We investigated the petroleum policy of Azerbaijan and the problem of petroleum pipelines. Investigation of the Caspian Sea and the problems of petroleum in the South Caucasus international process, makes it possible to characterize also the essence of U.S. policy, the EU and the UK to Azerbaijan. The first chapter ends with a study of international transportation problems.

The second chapter - "Azerbaijani factor in the South-Caucasian policy of Russia and the CIS inter-state relations", has three sub-chapter devoted to a particular study of Russian-Azerbaijani relations. Simultaneously, the influence factor of Azerbaijan's territorial policy of Russia is linked with the foreign policy of Azerbaijan within the CIS, which makes them parallel investigation required.

The third chapter of the thesis consists of two subchapters and is dedicated to the following: "Azerbaijan's territorial policy of the Islamic Republic of Iran and Turkey, religious and ethnic instruments of political influence." Here, the subject of political science research is the intention of developments in 1990 and 2004. Iranian-Azerbaijani and Turkish-Azerbaijani relations.

The fourth chapter of the thesis: "Azerbaijan's foreign policy initiatives in the framework of international organizations" consists of three subchapters. It is devoted to research activities in Azerbaijan in international organizations included in the South Caucasus international

processes (UN, EU, NATO, OSCE). Based on the chronological framework of the thesis, for the observation was taken between 2003 and 2004, which coincides with Azerbaijan implemented in these institutions initiatives after coming to power President Ilham Aliyev.

The content of the study can be presented in the following:

- in nowadays world the priorities of the energetic safety dictate Azerbaijan to put the advantages in the basis of its foreign political doctrine, which are concerned with the potential of export, petroleum and other energetic resources transportation. Of course, energetic and transition potential increase the force of Azerbaijan in the international politics. However, political elite of the country meets the serious impediments in the sphere of foreign politics, when starts overestimating the role of petroleum diplomacy.
- The presence of huge transnational petroleum monopoly brings to foreign political dictate and compulsion of certain rules, which not always correspond to the interests of the country. On the other hand, nowadays, the petroleum perspectives of Azerbaijani are limited enough. Potentials of "resources prosperity" of the country also are limited. Azerbaijan seems to be in the sphere of resources myth influence. That's why sometimes "petroleum strategy" of the country brings to lack of political foresight and collapse.
- In the result of new geopolitical situation instead of two Caspian republics (the USSR and Iran) five republics appeared (Azerbaijan, Kazakhstan and Turkmenistan were added) with their pretensions to the Caspian petroleum resources. And it is not accidentally, that in postsoviet period the division of Caspian sea became to an actual problem and a factor of confrontation, and not the cooperation of Caspian republics. Having energetic resources, Azerbaijan and other Caspian republics turned into a difficult situation. They don't have good consumers of energetic resources, huge petroleum, gas mains and sea communications nearby. These circumstances make them dependant on Russia. So, simultaneously with the increasing of the international role, petroleum also brings difficulties, makes tension, contradictions and dependence on neighbors and leading world republics.
- The next in the politics of Azerbaijan in the years 90 was the problem of petroleum pipe-lines. In the question of Caspian petroleum transportation many interests meet. Built petroleum pipe-lines in Baku, Jeyhan, was the result of successful regional energetic politics of USA. USA eager to divide Russia from Central Asia, what would weaken regional positions of Azerbaijan. In the result, strengthening of the American influence brought several problems with Russia and Iran. With starting of using petroleum pipe-lines of Baku, Jeyhan, the plans of Russia and Iran concerning the transition of energetic resources over the north (Baku-Novorossiysk) and the south (over the territory of Iran to the Persian Gulf) were

collapsed. After the elections of the president, in 2008, reformed administration of George Bush junior, created a new foreign political conception. USA refused the politics of active interrupting the regional conflicts, giving the preference to the defense of national interests. In fact, strengthening of regional positions of Azerbaijan with the American help has not been managed.

- Avoiding tendentiousness, one could argue that the role of Azerbaijan in economic, transport and communication processes, uniquely contributed to increasing its political weight in the West. But Azerbaijan has always suffered a failure when tried to exchange the petroleum solution of the Karabakh problem. Karabakh conflict and the history of the pipeline have evolved in different ways. They could be related, if Baku - Ceyhan pipeline passed through the Armenian territory, but formed in 1988. new government in Yerevan rejected linking the issue with the decision of the Karabakh conflict.
- The possession of petroleum wealth in some cases brings with domestic political and economic fallout. In particular, Azerbaijan is an example of the negative impacts of the petroleum factor in the democratic processes. Control over hydrocarbon resources deprives the petroleum-producing countries to create the prerequisites for the rotation of political elites and the separation of powers. Power to buy its legitimacy - or with the help of petrodollars, or police violence - instead of competition, and democratic elections. In the future, the state falls into complete dependence on exports of natural resources and is vulnerable not only political but also economic and social spheres.
- Analyses of experts from international organizations and Western political scientists rather reserved assess the reality of the power of blackmail Azerbaijan on the basis of "excessive profits of petroleum." The impact of the petroleum factor in the militarization of the region and the possibility of military action in Nagorno-Karabakh conflict, researched and published in November 2007 in the report of the International Crisis Group (ICG)

- The South Caucasus policy of Russia and Western powers is aimed on consolidation of the geopolitical positions, retention of great potential on the exploitation of energy resources, consolidation of own capital, and control over communications. These strategic interests dictate the keeping Azerbaijan under Russia's control. At the same time, pro-Western foreign policy of Azerbaijan and its tendency to exclude Russia from the construction of petroleum and gas pipelines meets a sharp opposition of the Kremlin. On the other hand, strategic Russian-Armenian cooperation complicates Russian- Azerbaijan relations even more.
- The South Caucasus and particularly Azerbaijan take an important place in foreign policy of Turkey and Iran. After the collapse of USSR they continuously attempted to strengthen their positions in Azerbaijan; however, a tension remained in the Iran- Azerbaijan relations due to

the Karabakh conflict and the ethnic problems of the Azerbaijani population of Iran. The friendly position of Iran to Armenia always was criticized in Baku, while Teheran reacted very painfully concerning the pro-Western policy of Azerbaijan and its rapprochement with NATO Turkey, considering the latter as the threat to the national security of Islamic Republic. In spite of these difficulties, the new President of Azerbaijan I. Aliev was able to improve Iran- Azerbaijan relations considerably in 2004-2005. Ten international agreements on power engineering, transport and safety were signed.

- After Ilham Aliev's appointment as the president, in 2004 Azerbaijan introduced some proposals to the United Nations, in regards to the Karabakh conflict. During his presentation on October 14, 2004 at the 59th session of United Nations, I. Aliev stated that Armenia does not fulfill 822, 853, 874 and 884 resolutions of United Nations and realized the populations overflow to the "occupied" regions of Azerbaijan. Azerbaijan succeeded to include a topic regarding the situation in "occupied" Azerbaijan territories in the agenda of the General Assembly of the UN. This initiative was not approved by the co-chairmen of Minsk group. The discussions started on October 23, during the consequent meeting of the 59th session of the UNPA. Nevertheless, voting did not take place, and a compromise solution was accepted: Azerbaijan withdrew its proposals, and Armenia gave its agreement for the establishment of a special mission OSCE on the study of demographic situation in the indicated territories.

A handwritten signature in black ink, consisting of a large, stylized initial 'A' followed by a horizontal line and a flourish.